№ 245 ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10

1905

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10 № 245

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱՅ **1906** ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի:

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն): Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով: ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ" իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի պատասխանի առիթով. Վերջին տեղեկութիւններ. Տեղեկութիւններ գաւառից.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բագուի կեանքից. Մտքեր և փաստեր. Դրութիւնը Գանձակում. Տնայնագործութիւնը մեռնում. Մի բացատրութիւն. Ընդհանուր գործադուլ. Անկամայ պատասխան. Իր տակառն չէ. Ոլիմպոսից որոտացողներին. Նամակներ Խիվայից. Պատասխան Գ. Աւագեանցին. Մի երկու խօսք հայկական ակումբի մասին. Նամակ Ախալցխայից. Ներքին լուրեր.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՄԻ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱՌԻԹՈՎ

Մենք «Մշակ»-ի № 242-ի մէջ մի յօդուած էինք նուիրել այն ձևակերպութեան, որ մշակել էր սօցիալ-դեմօկրատների համագումար ժողովը հայ-թուրքական ընդհարումների վերաբերութեամբ:

Այդ ձևակերպութեան մէջ ասված էր, որ «հայ-թուրքական ընդհարումների հիմք ներկայանում են հայ-թուրքական մասսաների խաւար և անգիտակից լինելը, մասսաների, որոնք հպատակված են իրանց ազգութիւնների բուրժուա-ազգայնական իդէօլօգների ազդեցութեան»:

Այդ ձևակերպութիւնը մենք անուանել էինք սխալ և աւելացրել էինք, որ եթէ մի բան սխալ է՝ նա չէ կարող նպաստել հրապարակում դրած ծանր խնդրի բաւարար լուծման:

Մեր այդ յօդուածի առիթով Թիֆլիսում հրատարակվող «Кавказскій Рабочій Листокъ» լրագիրը զետեղել է մի նկատողութիւն, որի վրա կարևոր ենք համարում փոքր ինչ կանգ առնել:

Առաջ բերենք սօցիալ-դեմօկրատների օրգանի հետևեալ խօսքերը. «Մենք հայ-թուրքական կոտորածի մէջ երբեք չենք մեղադրել հայ ինտելիգենցիային: Կոտորածը սարքել է—հազար անգամ և ամեն կերպ բացատրել ենք ձեզ—ցարի կառավարութիւնը: Իր պրօվակատօրական, հակա-յեղափոխական նպատակների համար կառավարութիւնը օգտվել է այն թշնամութիւնից, այն հակառակութիւնից, որ գոյութիւն ունի մի կողմից թուրք ազնուականութեան և թուրք բուրժուազիայի, իսկ միւս կողմից հայ մանր և խոշոր բուրժուազիայի մէջ: Կոտորածի գլխաւոր մասնակցողները եղել են թուրքական և հայկական ժողովրդական մասսաները, որոնք անտեսապէս և գաղափարապէս հարստահարված են տիրող դասակարգերից և ներկայանում են իբրև անգիտակցական կոյր գործիքներ նրանց ձեռքում»:

Սօցիալ-դեմօկրատական լրագիրը մեղաւոր չէ ճանաչում հայ ինտելիգենցիային կոտորածների մէջ: Այդ շատ թանկագին մի յայտարարութիւն է, որը և կարձանագրենք ուրախութեամբ մեր լրագրի էջերում:

Ինչ վերաբերում է այն բանին, որ կռուող հայերը և թուրքերը եղել են անգիտակից կոյր գործիքներ բուրժուազիայի ձեռքին, մենք հակված ենք ենթադրելու, որ թուրքերի մէջ այդպիսի մի երևոյթ մի որոշ աստիճան տեղի ունի, իսկ մեր հայերի վերաբերութեամբ նա սխալ է:

Առաջինը մեր մասսաները ամենևին ոգևորված չեն եղել թուրքերին կոտորելու գաղափարով և մեծ մասամբ զոհվող ու կոտորվող կողմն են եղել, երկրորդ նրանք աշխատել են, որտեղ կարողացել են, միայն դիմադրող ույժ ներկայացնել յարձակվողների դէմ և երրորդ, եթէ բացառիկ դէպքերում յարձակումներ են գործել, դա արել են ոչ իբրև մի անկախ ծրագրված գործ, այլ իբրև մի քայլ, որ կապված է եղել դիմադրութեան նպատակի հետ:

Հայ բուրժուազիան այդտեղ դեր չէ կատարել: Եթէ բանը հայ բուրժուազիայի ձեռքին մնացած լինէր, գուցէ մասսաները այն դիմադրութիւնն էլ ցոյց տուած չը լինէին թուրքական հրոսակներին, որ իրապէս ցոյց տուին: Հայ բուրժուազիայի ներկայացուցիչները Շուշում, օրինակ, մի գլուխ զբաղված էին հաշտութեան և բարեկամութեան ամեն տեսակ ծրագիրներով և պատրաստ էին ամեն տեսակ, նոյն իսկ անարժան, ուղերձներ ստորագրելու, միայն թէ ընդհարումներին վերջ տրվէր, միայն թէ թուրքերը նորից կոտորածներ չառաջացնէին: Եւ հայ կռուողներին ոգևորողները բուրժուաները չէին, այլ գիւղացիները:

Ինչ կասէիք դուք, եթէ մենք մի այսպիսի համեմատութիւն անելու լինէինք: Օրինակ տեսնելով, որ խուլիգանները յարձակվում են ուսանողների վրա, մենք մեղադրէինք երկու կողմերն էլ, համարելով դրանց արդիւնք ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան մեղքերի, առարկելով, որ խուլիգանը կրթվել է վատ գրքերի վրա, իսկ ուսանողն էլ չէ ունեցել լաւ պրօֆեսսորներ: Եւ մեղադրելով երկուսին էլ ցանկանայինք մի գծի վրա դնել և խուլիգանին և նրանից փախչող ուսանողին:

Մենք լաւ գիտենք, որ հայ մասսաները մեծ պակասութիւններ ունեն և նրանք յաճախ կոյր գործիքներ են լինում վաշխառուի և հարստահարողի ձեռքում. բայց ներկայ դէպքում բոլորովին ուրիշ հարց է դրված մեր առաջ:

Ինչ վերաբերում է «К. Р. Л.» լրագրի պօլեմիկական այն ձևերին, թէ մենք տգէտ ենք, չենք հասկանում սօցիալական խնդիրները, մենք այդ ձևերը համարում ենք չափազանց հին և անհամոզիչ: Մենք յարգանքով ենք վերաբերվում դէպի սօցիալ-դեմօկրատների գործունէութեան շատ արտայայտութիւնները, և դէպի նրանց լրագիրը և անկասկած չենք ցանկանում պօլեմիկական սրախօսութիւններով կասկածելի յաղթութիւններ վայելել:

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բօրչալուի գաւառից եկած մի անձ մանելով խմբագրատուն, հաղորդեց մանրամասն տեղեկութիւններ գաւառում տեղի ունեցած դէպքերի մասին: Աչքի առաջ ունենալով, որ «Մշակի» մէջ լոյս են տեսել մի քանի հաղորդագրութիւններ, մենք առաջ կը բերենք միայն լրացուցիչ տեղեկութիւններ:

Թուրքերի մէջ շատ տեղերում թալանը բաժանելու ժամանակ ծագել են մեծ երկպառակութիւններ, որոնք վերջացել են ծեծով, միմեանց վէրքեր հասցնելով և նոյն իսկ սպանութիւններով: Օրինակ այն շրջանում, ուր թալանի էին ենթարկվել Բաշկիչեթի, Դուխօբոր-Ղարաքիլիսայի և շրջակայքում գտնվող հայ խանութները և տները, թուրքերը միմեանց մէջ մեծ ընդհարումներ են ունեցել և տուել են 10—15 վիրաւոր և մի քանի սպանվածներ:

Առհասարակ, պէտք է նկատել, որ Բօրչալուի գաւառի թուրքական շարժումը կրում է եղել աւելի թալանի քան մարդասպանութիւններ անելու բնաւորութիւն: Այդ պատճառով սպանված հայերի թիւը շատ քիչ է: Այդ սպանվածների մէջ են Յ. Մելիք-Բախտամեանցի պղնձագործարանի կառավարիչը և նրա կինը. Թուրքերը գնդակահարել էին կառավարչին, իսկ կնոջը կտոր-կտոր արել:

Թուրքերից վիրաւորված և սպանված կարելի է հաշուել Բօրչալուի գաւառում մինչև 40 անձ:

Հայերը, քիչ զոհ տալով անձի կողմից, չափազանց մեծ կորուստներ են ունեցել գոյքի և ապրանքի կողմից, որոնց արժէքը մի քանի միլիոնի է հասնում:

Կողոպտված իրերից շատ քիչ մասն է առ այժմ վերադարձված: Բացի կալուածատէր Ենիկոլոփեանի յետ ստացած իրերից, կարող ենք յիշատակել Պօլեսյ հայ-վրացական գիւղի ոչխարների մի հօտը, որ թուրքերը յետ են ուղարկել:

Ցաւալի է արձանագրել, որ կողոպուտներ անելուն մասնակցել են մի տեղ և վրացիները: Ղալամշա վրացական գիւղի տանուտէր Շաքար Բաղաշվիլի մի ուրիշ վրացու հետ վերցրել է Դուխօբոր-Ղարաքիլիսայի խանութից մի քանի իրեր, օրինակ բրեզէնտներ:

Թուրք թալանողները ամենևին չեն քաշվում այն բանից, որ իրանք թալան են արել և իշխան Ցիցիանովը պատմել է Դուխօբոր-Ղարաքիլիսայի խանութպանին, որ նա տեսել է վերջինի ձին Ղըլքիլիսեցի քուռ Ահմադի տակին:

Ի միջի այլոց աւելորդ չէ յիշատակել և հետևեալ օտարոտի երևոյթը. գերմանական Եկատերինենֆելդ գիւղի բնակիչները վերջին օրերս չափազանց զայրացած էին տեղական մի պաշտօնեայի կարգադրութիւնից: Այդ պաշտօնեան պատուիրել էր, որ գերմանացիները իրանց սայլերով ձրի տանէին թուրք բէկերին դէպի Արխլու: Գերմանացիները չէին համաձայնվել, պաշտօնեան շատ խիստ բարկացել էր: Յայտնի չէ թէ ինչով վերջացաւ բանը:

Հանգստութիւնը տիրելուց յետոյ, գաւառի զանազան տեղերում գտնվող խանութների տէրերը պէտք է վերադառնան իրանց հաշիւները մաքրելու, ապառիկները ստանալու և վերջնական կարգադրութիւններ անելու համար:

—

«Нов. Об.» լրագրի № 253-ում տպված է Դ. Դ.-ի յօդուածը, որի մէջ առաջ են բերված մի քանի հետաքրքիր տեղեկութիւններ Գանձակի աղէտի մասին: Դ. ուղևորվեց Թիֆլիսից Գանձակ դեկտ. 4-ին. ճանապարհին, Պօյլի կայարանում, գառն մօտ, նա տեսաւ արեան ճահիճ—դեռ չը սառած արիւն: Յայտնվեց, որ թուրքերը դուրս են հանել վագոնից մի հոգի և սպանել... Սպանել են խենջալով հէնց այդտեղ, կայարանում, վագոնների առաջ, Բագուից Թիֆլիս գնացող բոլոր ուղևորների առաջ: Մարդկանց խօսակցութիւնից երևում է, որ իբր թէ գնացքից հայերը հրաձգութիւն են արել թուրքերի վրա և երկուսին վիրաւորել և հայի սպանութիւնը Պօյլիում—վրէժխնդրութիւն է այդ հրացանաձգութեան և վէրքերի համար:

Հետևեալ կայարանում նա տեսաւ կօզակներին, որոնք գնում էին Զարդախլու—հայ գիւղը, շրջապատված թուրքերից: Երեք օրից ի վեր այդտեղ հրաձգութիւն կայ, իսկ այդ օր, ինչպէս ասում էին, նշանակված է «շտուրմ»: Պէտք է գիւղը վերցնեն գրոհ տալով. ուղարկել են պահապաններին թնդանօթ բերելու Գանձակից: Հասաւ մի ուրիշ կայարան, ուր վագոնը մտաւ Գանձակ գաւառի 5-դ մասի պրիստաւը, ռուս: Հիւծված, շշմած աչքերով, տկար մարդ, նա սկսեց ասել Գետաբէկում կատարված բոլոր սարսափների և աւերումների պատմութիւնը:

— Երեխաներին պատառ պատառ էին անում: Իմ գրագրին, որ վրացի էր, քաշեցին ինձանից մի սաժէն տեղ հեռու և սկսեցին կտրել նրա վիզը... Ես երեխաների համար աղերսում էի, լացում... Ինձ չէին լսում... Ինձ սպառնում էին հրացանի բանել, եթէ միայն պահակը մի հատ փամփուշտ ես արձակէ թուրքերի վրա: Ես եկել էի ընդունել գաւառամասը նախկին պրիստաւից, որ մուսուլման էր, բայց ընկայ գերի, բառիս բուն նշանակութեամբ: Մի մարդ վարձեցի 50 րուբլով, որ Գետաբէկի դէպքերի մասին զեկուցագիրս հասցնէ Գանձակ, բայց ժամանակին չը հասցրին և յետոյ արդէն ուշ էր: Հարիւր րուբլի վարձատրութեամբ համաձայնեցին տանել իմ զեկուցագիրս Թիֆլիս, որով ես խնդրում էի իշխանութիւնից շուտափոյթ օգնել:

—Ինչպէս էր պահում իրան նախկին պրիստաւ-մուսուլմանը:

—Ինձ ևս պահպանեց—շարունակեց 5-րդ մասի ռուս պրիստաւը—բայց հայերի վերաբերմամբ... Երկու հայ աղջիկներ... այժմ նրա մօտ են. սպանված հայի վրայից նա հանեց ատրճանակը և իմ առաջ կախեց իր վրա: Եթէ ինձ տան կազակներ, ես առաջինը իմ գաւառամասում պէտք է կալանաւորեմ նախկին պրիստաւին և կառավարչական տանուտէրին: Վերջինը, առանց քաշվելու, կողոպտում և սպանում էր իմ աչքի առաջ:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Բեչիչքենդ, 13 նոյեմբերի. «Արդէն «Մշակի» ընթերցողներին յայտնի է մեր գաւառական իշխանութեան վայնասունը Հօրս գիւղի վրա եղած յարձակման պատճառով:

Բայց յայտնի չեն այն միջոցները, որոնց դիմեցին գաւառապետը, փոխ-նահանգապետը և գեն.-նահանգապետը՝ ամբողջ 12 անմեղ հայ գիւղեր պատժելու համար: Մայիսեան դժբախտ օրերից սկսած մինչև այժմ, մեր գաւառական իշխանութիւնները երբեք այնպիսի կենդանի, եռանդուն գործունէութիւն չէին ցոյց տուել, ինչպէս այդ արեցին թուրք Հօրս գիւղի վրա յարձակման օրից: Հօրս գիւղը իր աւազակաբարոյ և արիւնռուշտ գործողութեամբ վաղուց արդէն շահել էր իրանց համար թշնամիներ ոչ միայն հայերից, այլ և թուրքերից և քրդերից: Իսկ ամառվայ բոլոր յարձակումների ժամանակ հօրսեցիք չափ ու սահման չը թողեցին և միշտ էլ անպատիժ մնացին: Սակայն դառնանք մեր առելիքին:

Փոխ-նահանգապետը դէպքի երրորդ օրը, կարծես արծուի թևերով այստեղ հասաւ. իսկ գաւառապետի օգնական տիրահայեաց Սկրեբինսկին նրանից առաջ էր եկել: Սկսվեց խուզարկութիւնը հայ գիւղերում չը տեսնված խստութեամբ, երբ այս բոլորը ոչ մի հետևանքի չը հասաւ, սկսվեց և մինչև այժմ էլ շարունակվում է այն հայերի ձերբակալութիւնը, որոնց վրա մատնացոյց են լինում թուրքերը:

Չը նայելով, որ ոչ մի դրական ապացոյց չը կայ և ընդհակառակը այդ հայերը կօզակների վկայութիւններով հաստատում են իրանց անմեղութիւնը, այնու ամենայնիւ այդ բոլորը ոչ մի չափ ու սահման չեն կարողանում դնել պ. Սկրեբինսկու միակողմանի եռանդին: Եկեղեցական կալուածները խլելու ժամանակ, Ղամարլուում ցոյց տուած իր հայակերութեան մէջ նա մինչև այժմ էլ անյողդողդ է:

Փոխ-նահանգապետը, ինչպէս ասում են գեն.-նահանգապետի նախապէս տուած հրահանգների համաձայն, 12 հայ գիւղերը, որոնցից շատերը 30 վերստից աւելի հեռու են Հօրսից, ենթարկեց տուգանքի—10-ական րուբլի ամեն մի տանից և այդ գործը յանձնելով տեղական պրիստաւին և Սկրեբինսկուն, ինքը մեկնեց Շարուր, ուր նրան սպասում էր գեներալ-նահանգապետը: Գիւղացին բողոքում է, որ ինքը մեղաւոր չէ և ուրեմն չը պիտի տայ այդ տուգանքը. իսկ պ. Սկրեբինսկին հրամայում է գիւղի մի քանի տան տաւարը, ոչխարը, ձին, ջորին քշել: Նա այդ թալանը քշում է Ղօզուլչա թուրք գիւղը և այնտեղ գնահատում: Գնահատութիւն... 80—100 րուբլանոց ջորին 20 րուբլի, մնացածի մասին դժուար չէ գաղափար կազմել:

Գեներալ-նահանգապետը Հօրսի դէպքի առթիւ մօտակայ երեք հասարակութիւնից 12 ներկայացուցիչ էր կանչել Շարուր, 6 թուրք և 6 հայ: Մեծամասնութիւնը չէր գնացել. երկու կողմից միայն 5—5 հոգի էին ներկայացել: Գեներալ Եացկևիչը հայ և թուրք ներկայացուցիչներին առանձին առանձին խօսացնում և արձակում է: Հայ ներկայացուցիչների բողոքը վերև յիշած կարգադրութեան դէմ մնում է առանց հետևանքի: Գեներալը հրամայում է տալ այդ տուգանքը և հանգիստ մնալ, այլապէս խիստ կը պատժվեն և աւելացնում է, որ թուրքերը մեծամասնութիւն են կազմում և կարող են հայերին բնաջինջ անել՝ եթէ վերջիններս հանգիստ չը մնան: Ուրեմն՝ ընթերցող, թող հայը թալանվի, մորթոտվի, բայց իր դարաւոր համբերութիւնից և ստրկութեան հասած համբերութիւնից չը դուրս գայ, որովհետև թուրքերը մեծամասնութիւն են կազմում: Այո, խաղաղութիւնը քաղցր է չափազանց քաղցր է հայի համար: Բայց երբ կը լինի խաղաղութիւնը և ո՞վ կը տայ մեզ, մեր անմխիթար հարևանները թէ՞ ոստիկանութիւնը, յանձին Սկրեբինսկու և ընկերութեան...

Հայերի ճարն ամեն կողմից կտրած, նրանք ընտրեցին երկու ներկայացուցիչ, որոնք պէտք է Երևան և Թիֆլիս գնան, իրանց զրկված գիւղերի դատը ներկայացնելու՝ ուր հարկն է:

Երէկ, ամսիս 12-ին Այար հայ գիւղը թալանող ղուրբանքեասըլանցի թուրքերը նորից հարկաւոր համարեցին յարձակվել այդ թշուառ գիւղի վրա: Նրանք քշել, տարել են գիւղի նախիրը: Ճաշից յետոյ, երբ լուրը հասաւ պրիստաւին, նա իր հետ վերցնելով 12 կօզակ իրանց օֆիցերի հետ, շտապեց դէպքի տեղը: Նրանք այն ժամանակ էին վրա հասել թուրքերին, երբ նրանց մի մասը նախիրն էր քշում, իսկ մի մասը կտրել էր Ղուրբանքեասըլան տանող ճանապարհը: Պրիստաւի հրամանին՝ դուրս գալ ճանապարհից, նրանք պատասխանում են գնդակներով: Ի նկատի ունենալով թուրքերի թւական մեծ առաւելութիւնը և այն, որ նախիրն արդէն հեռացել էր, մութն էլ վրա էր գալիս, պրիստաւը և օֆիցերը վերադառնում են Այարցիները ճանաչել են աւազակներից շատերին, որոնք իրանց սխրագործութիւններով այս տարի յայտնի են դարձել: Այարի դէպքը շատ ուշագրաւ է և բնորոշ: Ահա թէ ինչպէս:

Նոյն ղուրբանքեասըլանցի թուրքերից մէկը, Նաբի անունով, որը ամենաազդեցիկն է այն կողմի թուրքերի մէջ, մի քանի օր առաջ, Հօրսի դէպքից անմիջապէս յետոյ, մի քանի ուրիշ թուրքերի հետ, գալիս է Բէչիչքենդ հայաբնակ գիւղը և առաջարկում է միջոցներ ձեռք առնել հաշտութիւն կայացնելու հայերի և թուրքերի մէջ: Նա խոստանում է, որ ինքը պատրաստ է իրանց կողմի 4 գիւղի համար ստորագրութիւն տալու, որ երբեք նրանք չը խախտեն խաղաղութիւնը: Դէպքն այնպէս է բերում, որ Շարուր գնացող ներկայացուցիչներից մէկն էլ սոյն Նաբին է ընտրվում: Հայերը, ուրախութեամբ ընդունում են նրա առաջարկը հաշտութեան մասին և պայմանաւորվում են Շարուրից վերադառնալ, հաւաքվել և խորհուրդ անել այդ մասին: Սակայն Նաբին Շարուրից վերադառնում է, բայց Բէչիչքենդ չի էլ հանդիպում, այլ ուղղակի իր գիւղն է շտապում: Անցած դրանից երեք օր՝ և ահա հաշտութիւն առաջարկող Նաբին իր հրոսակախումբը տանում է արդէն մի անգամ հէնց իրանց ձեռքով թալանված հայ գիւղի վրա: Ինչո՞վ բացատրենք այդ: Ես համոզված եմ, որ նա հաշտութիւնն առաջարկում էր անկեղծ: Բայց Շարուրում ինչ հրահանգ, ինչ ներշնչում ստացաւ՝ դա շատ հետաքրքիր է և գուցէ միակ պատճառը՝ թալանված Այար գիւղի կրկին թալանվելուն:

Սպասենք, տեսնենք պատիժն ինչ է լինելու...

Ա. Բունեաթեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱԳՈՒԻ ԿԵԱՆՔԻՑ

IV

Հայ սօցիալ-դեմօկրատիան անհաշտ թշնամութիւն է յայտարարել այն շարժման, որի նպատակն է բարւոքել թիւրքահայ դժոխային դրութիւնը: Դա հայոց հարցն է, միջազգային քաղաքականութեան և նորագոյն պատմութեան ամենազարհուրելի ոճիրներից մէկը:

Հայոց հարցը մարքսիստները միանգամից ընդմիշտ մկրտել են նացիօնալիստական շարժում անունով: Նրանց կարծիքով, դա մի յետադիմական, բուրժուազական շարժում է, որ սաստիկ վնասում է ռուսահայ պրօլետարիատի շահերին: Ուստի հայ մարքսիստները իրանց ամենագլխաւոր ձգտումներից մէկն են համարում դիմադրել այդ շարժման, թուլացնել նրան: Այստեղից արդէն հասկանալի է, որ նրանց աչքում առանձնապէս վտանգաւոր պիտի լինեն այն յեղափոխական կազմակերպութիւնները — Հնչակեան կուսակցութիւն, բայց մանաւանդ Դաշնակցութիւն,—որոնք գործում են հայոց հարցի շուրջը, աշխատում են յեղափոխական միջոցներով նուաճել մարդկային ամենատարրական իրաւունքներ, ամենախոյտառակ մի բռնակալութեան տակ հեծող հայ ժողովրդի համար...

Մենք ասացինք որ «Баку» լրագրի էջերից մի անինայ արշաւանք է սկսված Դաշնակցութեան դէմ: Այստեղ պարտաւոր ենք համարում արձանագրել որ այդ արշաւանքը շատ անգամ ստանում է մի գաղափարական կուսակցութեան համար շատ անպատուաբեր կերպարանք: Միթէ, ճշմարիտ, սօցիալ-դեմօկրատիայի համար կարող է գոյութիւն ունենենալ միջոցների անխտրականութիւն, եզուիտական մի զզուելի սկզբունք: Չենք հաւատում, որովհետև յարգում ենք գիտական սօցիալիզմը ամբողջ սրտով, որովհետև չափազանց բարձր հասկացողութիւն ունինք ճնշված, հարստահարվող դասակարգերի հզօր պաշտպանութեան հանդիսացող կազմակերպութեան մասին:

Եւ սակայն, տեղդ մի երկու փաստեր տեսանք քաղաքացի Կ. Նազուբեանի թերթի մէջ: Յայտնի է մեր ընթերցողներին, որ մի քանի հատ շովինիստ վրացիներ լրագրութեան մէջ պահանջել էին որ քննութիւն նշանակվի Դաշնակցութեան կերպարանքը և հայ-թուրքական ընդհարումների մէջ նրա կատարած դերը պարզելու համար: Դա մի—եթէ աւելին չասենք—[illegible] պրօվօկացիա էր և այդպէս էլ գնահատվեց Թիֆլիսում: Բայց քաղաքացի Կ. Նազուբեանի թերթը [illegible] վրացական շովինիզմի այդ մարգարիտը: Չէ՞ որ նա այսպէս թէ այնպէս ձգտում էր արատաւորել հայ սօցիալ-դեմօկրատների այնքան ատելի թշնամի Դաշնակցութիւնը:

Այս բոլոր փաստից յետոյ աւելորդ է ուրիշ մանր-մունր յարձակումները յիշատակել: Կռուի մէջ, ասում է մեր ժողովուրդը, չամիչ չեն բաժանում: Սա ճիշտ է: Բայց գաղափարական մի կուսակցութիւն չը պիտի թոյլ տայ իրան սկզբունքների բանակռուի մէջ գործածել «արկածախնդիր», կեղծող և այլ այսպիսի գոհարներ:

Թողնենք այս: Կասեն թէ տակտիկայի հարց է: Տեսնենք թէ ինչպէս է սօցիալ-դեմօկրատիան յանձին իր հայ անդամների հասկանում հայոց հարցը:

Տարաբախտաբար, մենք ձեռքի տակ չունենք „Баку"-ի այն բոլոր համարները, ուր քննադատվում են մեր երկու յեղափոխական կուսակցութիւնները: Մեր առջև դրածը այն համարն է (177), ուր Յ. Արուշան սկսել է «Հայոց կեանքից» յօդուածների շարքը: Առաջին յօդուածը նուիրված է «Հնչակեան» կուսակցութեան և այդտեղ մենք ենք այդ կուսակցութեան ծագման պատմութիւնն ու պատճառները:

Ի՞նչպէս է յօդուածագիրը ներկայացնում թուրքահայերի դատը:

Յայտնի է, որ արևելեան հարցը այսօր կամ երէկ չէ ծնվել: Դա մի ահաւոր պատմական երևոյթ է, որ գոյութիւն ունի դարերից ի վեր և հիւսված է բազմաթիւ ճակատագրական հանգամանքներից: Այդտեղ կան և ցեղային-կրօնական հարցեր, և սուլթանական բռնակալութեան շահեր, և քաղաքական-առևտրական հաշիւների ու ակնկալութիւնների մի բարդ հիւսուածք:

Հայոց հարցը արևելեան կնճռոտ հարցի մի փոքրիկ կտորն է: Մենք չենք ուզում այստեղ մտնել նրա մանրամասնութիւնների մէջ, բայց պէտք է յիշատակենք այն հանգամանքները, որոնք ցոյց են տալիս թէ հայոց հարցը արևելեան հարցի մեծ կնճիռի մէջ չէ ներկայացնում որ և է մի ուրիշ հանգամանք, ուրիշ մի ձևակերպութիւն:

Հայոց հարցը 80-ական թւականներին չը ծնվեց: Նա գոյութիւն ունէր վաղուց, այն ժամանակներից, երբ Թիւրքիայի եւրօպական հողի վրա միմեանց ետևից ազատութեան գաղափարը սնուցանում էին իրանց մէջ յոյները, սերբերը, բօլգարները, ռումինացիները: Գիտակցական շարժում, որի նպատակն է քաղաքական ազատութիւն, մենք տեսնում ենք հայերի մէջ դեռ XVII դարի կէսից: Ի՞նչն են այդ շարժման դրդիչ հանգամանքները, ինչ կայծերից է առաջանում ժողովրդի կրծքի մէջ ազատութեան բոցը:—Բռնակալութեան ենթարկված հպատակների զարհուրելի անհաւասարութիւնը: Բռնակալութիւնը միայն ստրուկներ է ընդունում: Բայց թուրքական բռնակալութիւնը խտրութիւն է դնում նոյն իսկ և ստրուկների մէջ: Դա կրօնական խտրութիւնն է: Պետական կրօնը բացարձակ տիրապետող, իսկ միւս կրօնները արհամարհված, ոտնակոխ եղած: Խտրութիւնը առաջացնում է հարստահարութիւն, կամայականութեան սանձարձակ ազատութիւն: Հարստահարութիւնը անտանելի է դառնում մանաւանդ տնտեսական հողի վրա: Նա առաջացնում է ստրկութեան ամենազարհուրելի ձևը: Ստրուկը իր ստացուածքի, իր անձի, իր երեխաների տէրը չէ:

Ահա այս դրութիւնը տանում է դէպի յեղափոխութիւն: Յոյների, սերբերի, Լիբանանի քրիստոնեաների ազատագրութեան պատմութիւնը շարունակ այս գլխաւոր դրդիչներն է ցոյց տալիս: Եւ հայոց հարցն էլ իր դարաւոր կեանքի բոլոր էտապներում միշտ մի և նոյնն է պատկերացնում մեզ:

Այս բոլոր հանգամանքներից և ոչ մէկը, այս երկարատև կեանքի պատկերը չէ հասկանում կամ չէ ընդունում հայ սօցիալ-դեմօկրատը: Գլխաւոր պատճառը, մեր կարծիքով, այն է, որ նա մարդկութեան գործերը հասկանալու և քննելու համար ունի միայն մի հայեցակէտ—դասակարգային մրցութիւն կապիտալիստական հողի վրա: Այս բանաձևի ակնոցներով նայելով հայոց հարցի վրա, նա տեսնում է այսպիսի մի տեսարան:

Ամենից շատ ճնշված է գիւղացի ազգաբնակութիւնը և քաղաքային մանր բուրժուազիան: Ամենից շատ այս շերտերն են, որոնք տանջվում են թիւրքական աբսօլիւտիզմի կամայականութիւնից, որոնք ենթարկված են պաշտօնական և ոչ—պաշտօնական վաշխառուների լուծին: Մանաւանդ շատ ծանր է գիւղացուն խեղդող լուծը. նրա կիսա-նատուրալ տնտեսութիւնը, հողի պակասութիւնը, գիւղական և քաղաքացի վաշխառուների դաժան հարստահարութիւնը, արդիւնագործութեան նախնական ձևը, կարգին ճանապարհների բացակայութիւնը, աւազակների բռնութիւններն ու կողոպուտները, անձի և կայքի անձեռնմխելիութիւնը ապահովող պայմանների կատարեալ բացակայութիւնը, մի խօսքով—ինչպէս թիւրք ազգաբնակութեան, այնպէս և հայ գիւղացիութեան քաղաքական կատարեալ իրաւազրկութիւնը—ահա իրողութիւններ, որոնք աւելի և աւելի աղքատացնում են գիւղացուն: Հարկերի կապալառուական սիստեմը պէտք է աւելացնել այդ ճնշող ծանրութեան վրա: Գիւղացին քարուքանդ է դառնում, զրկվում է իր հողերից և հարկադրված է աշխատանք որոնել իր երկրից դուրս, դիմում է պանդխտութեան:

«Բայց—շարունակում է յօդուածագիրը—գիւղական մասսաների այս ճնշված, իրաւազուրկ [illegible] երկար ժամանակ չէր կարող անմռունչ [illegible] նա, վերջապէս պիտի հարկադրէր նրանց [illegible] թիւններ սկսելու, պիտի հրէր նրանց [illegible] փրկութեան միակ ուղիղ ճանապարհը—յեղափոխութեան ճանապարհը: Եւ այսպէս էլ եղաւ: Սկսվեց շարժում, սկզբում թոյլ, բայց աստիճանաբար սաստկացող, աստիճանաբար յեղափոխական ձև ընդունող, թէև ոչ-կատարեալ ձև: Այս շարժման հետզհետէ յարեց և քաղաքների ազգաբնակութիւնը յանձին մանր սեփականատէրերի, արհեստաւոր-տէրերի, խանութպանների, ինտելիգենցիայի մի մասի և պրօլետարների մի փոքրիկ մասի»:

Այստեղ հայոց հարցի մի կողմն է միայն նկարագրված և այդ նկարագրութիւնը միանգամայն ճիշտ է: Դրութիւնը, այո, այդպէս է: Բայց այդ դրութիւնը ինքնաբերաբար չը հասցրեց թիւրքահայ գիւղացուն յեղափոխական գիտակցութեան, ինչպէս կարծում է յօդուածագիրը: Յեղափոխութիւնը ժողովրդի մէջ մտցրին հէնց այն երկու կազմակերպութիւնները, որոնք այնքան ատելի են սօցիալ-դեմօկրատիային—Հնչակեան և Դաշնակցական կուսակցութիւնները: Դրանք ինտելիգենցիայի գործերն են, որոնք ստեղծվեցին քաղաքներում, քաղաքացի ազգաբնակութեան, մեծ մասամբ երիտասարդութեան շրջանում և ապա անցան գիւղական աշխարհը ոչ միայն քարոզի, այլ և ակտիւ գործողութեան կերպարանքով:

Ահա այստեղ անկողմնակալ, կուսակցական նեղսրտութիւնից ազատ քննադատութիւնը կարող էր լայն պարզաբանել այն կուլտուրական և քաղաքական դերը, որ կատարեցին երկու յեղափոխական մարմինները թիւրքահայ բազմատանջ, ստրուկ ժողովրդի մէջ: Կարող էր անաչառ կերպով քննել նրանց գործունէութեան բոլոր պակասութիւնները, բայց և խոստովանել թէ ինչ դրական հետևանքներ է տուել նրանց տարածած և գործադրած յեղափոխութիւնը:

Թողնելով այդ կարևոր հանգամանքը մի կողմում, յօդուածագիրը շտապում է անցնել այն հարցին թէ որքան թիւրքահայ յեղափոխութիւնը համապատասխանում է սօցիալիզմին: Այստեղ արդէն կեանքը թէօրիաների կաղապարի մէջ չէ մտնում, ուստի և բռնազբօսիկ բացատրութիւնների լայն ասպարէզ է բացվում: Իբրև սօցիալ-դեմօկրատ, յօդուածագիրը գտնում է որ կապիտալը, չը նայած իր դէմ յարուցած դժուարութիւններին, մտել է Թիւրքա-Հայաստան, դանդաղ առաջ է տանում իր յաղթական ընթացքը, ձեռք գցելով քաղաքային տնտեսութեան նորանոր ճիւդեր և դուրս մղելով արդիւնագործութեան հին միջոցները, դուրս մղելով և մանր ձեռնարկողներին:

Փաստական ապացոյցներ, թւանշաններ և խրոզութիւններ չէ բերում յօդւածագիրը, ուստի և անկարելի է ասել թէ—որքան համոզիչ են նրա ասածները: Եւ մենք առանձին մեծ կարևորութիւն էլ չենք տալիս այդ հարցին: Ներկայ դէպքում մեզ հետաքրքրում է այն հարցը, թէ ինչպէս պիտի փաստակար համարվեն Թիւրքահայքի համար գործող յեղափոխական կուսակցութիւնները, ինչպէս նրանք յետադիմական, նացիոնալիստական պէտք է անուանվեն:

Այս հարցերին մենք կը դիմենք եկող անգամ:

(Կը շարունակվի)

ՄՏՔԵՐ ԵՒ ՓԱՍՏԵՐ

XXI

Մեր նախորդ յօդւածները ապացուցին, թոյլատրում ենք մեզ յուսալ, որ Կովկասի ռուս և վրաց հասարակութեան զանազան ուղղութեան և կուսակցութեան խաւերը ոչ կարող են, ոչ էլ տրամադրութիւն ունեն հանդիսանալ անաչառ, արդարադատ դատաւոր, իրաւարար՝ Թուրք-հայկական ընդհարումների մէջ, այլ առ առաւելն կամենում են լոկ խաղաղարարի, միջնորդի դեր ստանձնել, այն էլ այն պատճառով գլխաւորապէս, որ այդ ընդհարումները խոչընդոտ են լինում երկրի ընդհանուր յեղափոխական շարժման կամ զանազան կազմակերպութիւնների ծրագրի իրագործման:

Թէ Թուրք-հայկական ընդհարումները անպայման խոչընդոտ են հանդիսանում մեր երկրի անտեսական, մտաւոր և առ հասարակ կուլտուրական զարգացման կանոնաւոր ընթացքին, այդ ակներև է. Թէ նրանք մեծամեծ աղէտների պատճառ են եղել և դեռ լինելու են, այդ նոյնպէս անկասկած է. Թէ նրանք ամենից առաջ և ամենից շատ վնասում են հայերին, կասեցնելով նրա առաջադիմութիւնը և կուլտուրական կեանքը—մինչ Թուրք տարրը այդ կողմից կորցնելու ոչինչ չունի, քանի որ նա դեռ ոտքը չէ կոխել կուլտուրայի շեմքի վրա—այդ էլ կարօտ չէ ապացոյցի: Եւ ուրեմն անօգուտ և ապարդիւն ջանք է քարոզել, յորդորել հայ տարրին՝ յետ կենալ եւրոպայական կուլտուրայից, քանի որ հայը ինքը ամենից լաւ զգում է այդ անհրաժեշտութիւնը, զգում է իր սեփական կաշուի վրա: Սակայն նա անզօր է իրագործելու իր տենչանքը, քանի որ Թուրք տարրը չէ հասկանում այդ անհրաժեշտութիւնը և նրա վրա կողմնակի յորդորները ու քարոզները ոչ մի ազդեցութիւն չեն գործում, քանի որ նա մինչև այսօր չը նկատեց մի հզօր ձեռք, չը լսեց մի հզօր ձայն, որ զսպէր նրան իր վայրագութիւնների մէջ, մի եռանդուն խօսք, որ համոզէր նրան, թէ նրա արածը ոճրագործութիւն է և վեհագոյն տեսակի ոճրագործութիւն, crime de lèse-majesté: Ընդհակառակը նա գտնում է խրախուսանք կառավարութեան կողմից, որի անգործութիւնն և յանցաւոր անտարբերութիւնը աւելի բորբոքում են նրա գիշատիչ հակումները: Նա գտնում է խրախուսանք չէզոք ազգութիւնների կողմից, որոնք աշխատում են մեղմացուցիչ հանգամանքներ գտնել նրա յանցանքի մէջ, կամ նոյն իսկ արդարացնել նրան, իբրև մի շահագործված և հարստահարված տարրի, կամ վերագրել նրա յանցանքը աղքատութեան ու անգիտակցութեան: Եւ նա շարունակում է ու շարունակելու է դեռ երկար իր աւերումները, վայրագ շահատակութիւնները և դրանով էլ ստիպելու է հայ տարրին, հակառակ իր ցանկութեան՝ վար չը դնել զէնքը, անձնատուր չը լինել կուլտուրական զարգացման ու մտածել միայն և միայն ինքնապաշտպանութեան համար:

Երբ մի ժողովրդի, ազգի ամբողջ ֆիզիքական գոյութիւնն է վտանգի ենթարկւած, այլ ևս նա չէ կարող, նա [illegible] չէ իր կուլտուրական [illegible] զարգացման մասին մտածել:

Կամենում էք, որ նա մտածէ կուլտուրական կեանքի մասին. կամենում էք, որ նա խոչընդոտ չը հանդիսանայ ինքնապաշտպանութեան համար մղած իր կռւով ձեր, չէզոք և հարևան տարրերի կուլտուրական կեանքին—վերջ դրէք չարիքին, արմատից պոկէք նրան և անհնարին դարձրէք Թուրքական վայրագութիւնները և նրա, իբրև հետևանք, նաև հայերի ագրեսիվ գործողութիւնները:

Բայց այդ նպատակին հասնելու համար, չարիքը արմատից խլելու համար, դուք պէտք է ամենից առաջ որոնէք, գտնէք նրա իսկական պատճառը, երևան հանէք իսկական յանցաւորին, արդարադատ լինէք և ոչ իբրև խաղաղարար միջնորդներ, երկու, կռւող կողմերին ասէք. «Եւ դու ես մեղաւոր, և դու»: Հէնց այն հանգամանքը, որ տասնեակ պատճառներ էք մէջ բերում և կամենում էք ընդհարումները բացատրել անտեսական պայքարով, պրօլետարիատի կապիտալիզմի դէմ մղած կռւով, բուրժուազական ինտելլիգենցիայի խաղացած դերով, ազգային շովինիզմով, դասակարգային կռւով և նոյն իսկ մի քանի սիրեցեալ ու պատրաստի բանաձևներով—այդ ամենը ցոյց է տալիս, որ դուք շատ հեռու էք իրականութիւնը դիտելուց, չարիքի բուն արմատը որոնելուց, կամ տրամադիր չէք իսկական և միակ յանցաւորին գտնելու:

Արդ, մեր խորին համոզմունքով, Թուրք-հայկական արիւնահեղ և վայրենի ընդհարումների մէջ միայն մի յանցաւոր կայ. այդ յանցաւորը կամ կառավարութիւնն է, կամ հայը, կամ Թուրքը:

Պէտք է որոշել ո՞վ է դրանցից յանցաւորը:

Բայց ով պէտք է որոշէ:

Ո՞վ կարող է անաչառ, արդարադատ և հեղինակաւոր դատաւորի դերը ստանձնել:

Կառավարութիւնը, այն էլ ռէակցիոնական կառավարութիւնը չէ կարող, քանի որ նա ինքն ամբաստանութեան ներքոյ է:

Մենք տեսանք որ վրաց հասարակութիւն էլ չէ կարող, քանի որ նա մինչև այսօր, ամբողջ 10 ամսւայ ընթացքում, չը տուեց անաչառութեան և անկողմնակալութեան որ և է ապացոյց, քանի որ նա հարցը դրել է բոլորովին սխալ շաւղի վրա:

Մենք տեսանք որ չէզոք յեղափոխական կազմակերպութիւններն էլ չեն կարող լինել այդ անաչառ և արդարադատ դատաւորները, քանի որ նրանք մօտենում են հարցին արդէն պատրաստի մտաչափով, արդէն պատրաստի բանաձևներով, առանց ի նկատի ունենալու ընդհարումների առանձնայատկութիւնները, որոնք բղխում են Թուրք և հայ ժողովրդի պատմութիւնից, աշխարհագրական պայմաններից, միջազգային դրութիւնից, հոգեբանութիւնից:

Խնդիրը չէ կարող լուծել և Կովկասեան Թուրք-հայկական համագումարը, որ ծրագրում է Կովկասի փոխարքան. նա գուցէ կարողանայ միայն ժամանակաւոր և պալլիատիվ միջոցներ գտնել. նա անձեռնհաս է հէնց իր կազմի պատճառով որոշել ո՞վ է մեղաւորը, ո՞վ է յանցաւորը:

Իսկ այդ անհրաժեշտ է: Անհրաժեշտ է այն պատճառով, որ երբ որոշվի ո՞վ է իսկական յանցաւորը—Թուրքը թէ հայը, այն ժամանակ և չէզոք տարրերը իրաւունք կունենան ասել յանցաւոր կողմին. «բաւական է. դու ես պատճառ, որ մեր երկիրը աւերվում է, որ մեր կուլտուրան, մեր առաջադիմութիւնը կանգ է առնում. կամ դադարեցրու յանցաւոր արշաւանքդ, կամ կը ստիպենք քեզ դադարեցնել և կը զսպենք ու զինաթափ կանենք, ճիրաններդ կը պոկենք»:

Եւ այդպիսի մի հեղինակաւոր վճռի առաջ կը խոնարհվի յանցաւորը:

Բայց ո՞վ պէտք է լինի այդ հեղինակաւոր, անաչառ, արդարադատ քննիչը և դատաւորը:

Սահմանադրական ժողովը, որ պէտք է շուտով կոչվի քննելու և լուծելու Ռուսաստանի կարևորագոյն և հրատապ հարցերը, որոնց թւին պատկանում է և Անդրկովկասի խաղաղացումը ու Թուրք-հայկական ընդհարումներին վերջ դնելը:

Միայն նա կարող է լուծել այդ չարաբաստիկ և աղետալի հարցը:

Ուստի և դիմենք նրան:

Իսկ մինչ այդ լի յոյսով և հաւատով, զբաղվենք ինքնապաշտպանութեան գործով:

Շահրիար

ԴՐՈՒԹԻՒՆԸ ԳԱՆՁԱԿՈՒՄ

Դեկտեմբերի 2-ին

Այն կարծիքը, ինչ որ մենք ունէինք գեներալ-նահանգապետ գեներալ Ֆլէյշէրի վերաբերեալ—իրականութեան մէջ չիրագործվեց:

Ինչպէս երևում է պաշտօնը ամենալաւ հռչակ ունեցող մարդկանց անգամ փոխում է ու միակողմանի է դարձնում, մի յատկութիւն, որ աւելի ու անտանելի է փոքր ի շատէ զգացում ունեցող անձանց համար:

Ինչպէս երևում է, բազմաթիւ դիմումներ անելով, մօտ ու եկ անելով գեներալ Ֆլէյշէրի մօտը—կարելի է նրան էլ սխալեցնել ու վճռելու փոխարէն բազմաթիւ պահանջներ դնել հայերի առաջ, պահանջներ, որոնք մեր պահանջների առաջ զերօյ են հաւասար:

Լոյս են ընկել Թուրքեր, լեզգիներ, որոնք փողոցին հաշիւների պահանջներ են ներկայացնում հայերից, որոնց խնդիրքը անուշադիր չէ մնում գեներալ Ֆլէյշէրի կողմից: Իսկ հայերը, որոնք կորցրել են իրանց միլիոնները և որոնցից անխնայ ու անպէտք բաներ են մնացել բազարում, երբ կամենում են բերել հայոց թաղը, խոչընդոտներ են յարուցանում: Պաշտօնական անձինք իրանց պէտք է դիւրութիւն տան, բայց իրանց զարմանալի ու տարօրինակ վարմունքով նպաստում են խոչընդոտներին:

Օրինակ, Յովսէփեանի փայտի ու տախտակի պահեստը Թուրքերը կրել են—գողացել են: Մալեանցի ապրանքի մի մասը տարել են, միւս մասը մնում է. այս մնացածը Մալեանը ուզում է փրկել—կրել հայոց թաղը: Թուրքերը ու Թուրք ոստիկանները արգելում են տեղափոխվելու հայոց թաղը: Իշխանութիւնն այդ արգելքը օրինաւոր [illegible] ճանաչում և ուզում է որ փայտերի [illegible] մնայ չէզոք տեղերում, բայց [illegible] չը կայ, թէ ում [illegible] պէտք է մնայ և ով է պահեստի տէրը, ով է գնալու քաղաքի այդ մասում առևտուր անելու: Սա էլ մի տեսակ սխալանութեան ու գոյքի անձեռնմխելիութիւն է համարվում անիծեալ դարիս օրէնքով...

Հաշտութիւն է իբրև, բայց ինչպիսի հաշտութիւն, չենք կարողանում զօրքով անգամ կայարան գնալ մեր ապրանքները բերելու: Այսօր տէր Մկրտչեան զօրքերով շրջապատված գնացել է իր խանութի մնացորդ գինին, օղին բերելու. Թուրքերը յարձակվել են զօրքի վրա, սայլերը խլել ու զինուորին արգելել ապրանքները տեղափոխելու: Կատաղած զինուորները բազարից եկան ու գանգատվեցին գեներալ Ֆլէյշէրին. «Լաւ, գնացէք, յետոյ կը քննենք» պատասխանում է Ֆլէյշէրը:

Հայերի համբերութեան բաժակը լցվել է, չեն կարողանում տանել ոչ Թուրքերի լրբութիւնները և ոչ իշխանութեան կոմեդիական վարմունքը: Գանձակը ոսկորին է հասել. դրութիւնը անտանելի է բառիս բուն մտքով...

Արդար և անաչառ պաշտօնեայ է հարկաւոր, մարդասէր անձ է հարկաւոր Գանձակը խաղաղացնելու համար. չէ կարելի է այսչափ անիրաւութիւնները օր ցերեկով տանել, թող ում պարտքն է միանգամայն ընդմիշտ հասկանայ, որ Գանձակի հայերը ու նրանց մտածող մասը անկարող են ականատես լինել այսքան անմեղ մարդկանց արիւնահեղութեան: Նրանք կարող են իրանց վրէժը լուծել. այն ժամանակ, իշխանութեան ձեռք առած միջոցները ի զուր կանցնեն: Լրբութիւնը, անիրաւութիւնը իր չափ ու սահմանը պէտք է ունենայ: Եթէ պաշտօնական անձինք վախկոտ են և այդ վախկոտութիւնից կատարում են անիրաւների պահանջները, թող հրաժարվեն իրանց պաշտօնից:

«Возрожденіе» լրագրի թղթակիցը վերին աստիճանի անշնորհակալ պաշտօն է յանձն առել. նա ինքն եկել է Գանձակ և լռութեան տալով բազմաթիւ փաստեր, Թուրքերի հացին եղ է քսում, ընդհանրացած սովորութեանը դիմելով:

Նա գրում է թէ երբ հայերը եկել են հայոց թաղից երկու Թուրքերի դիակը տանելիս, հայերը դիմաւորեցին նրանց հրացանաձգութեամբ...:

Բացարձակ սուտ է այդ և առնւազն անիրաւութիւն. պարոնը, ինչպէս երևում է, այդ տեղեկութիւնն ստացել է Թուրքերից, կամ աւելի ուղիղն ասած՝ Թուրք ոստիկանապետից...:

Հայ ժողովուրդը երախտապարտ պէտք է մնայ այն չէզոք ազգի ներկայացուցիչներին, որոնք ցանկանում են հայ-Թուրքական խաղաղութիւնը աջողեցնել, բայց այդ չէ նշանակում, թէ այդպիսի ցանկութիւններով տոգորված մարդը պէտք է թոյլ տայ իրան մի այդպիսի անամօթ տեղեկութիւն տալ:

Հայերը եթէ նրանց զէնքով դիմաւորել են, գոնէ մի Թուրք սպանված կը լինէր հայոց թաղում: Իրողութիւնն այն է, որ Թուրքերը կողոպտելու նպատակով սպանել են յիշեալ երկու Թուրքերին, ապա դիերը մտել գնդակահարելու բոլոր անցնողներին. այս բանին վկայ են բազմաթիւ հայ մշակներ ճանապարհորդ գերմանացիներ և նրանց պաստորը...

Բարեխնամ իշխանութեան սրտի փափագը ինքը իրան իրագործվում է. հայերը երկիւղ կրելով խուզարկութիւններից, կամաց-կամաց կայարանից ցրվում են կամ գալիս են քաղաք: Նրանց տեղը բռնում են Թուրքերը, որոնք սկսել են բանալ չայխանաներ, մի հիմնարկութիւն, որտեղ մշտական բուն են դնում ամենակասկածելի անձինք: Եթէ վաղը կայարանում Թուրքերն այնքան բազմանան, որ աւերակ դարձնեն ամբողջ կայարանի քրիստոնեաների տներն ու խանութները, ապա թալանեն երկաթուղու կայարանի պահեստի ապրանքները—այն ժամանակ, թող մեզ չասեն թէ մարգարէութիւն են արել: Աշխարհաւերութեան միայն ընդունակ Թուրքերին մենք ճանաչում ենք, և քանիցս անգամ նախազգուշացրել ենք իշխանութեանը: Սակայն իշխանութիւնը իր որոշման մէջ մնաց հաստատուն:

Ինչպէս երևում է այսուհետև անկարելի է զօրքերով որ և է տեղ գնալ: Անցեալ շաբաթ կայարանից 36 հայ՝ ստրաժնիկներով շրջապատված գալու ժամանակ, երբ մօտենում են քաղաքին, Թուրքերն այս ու այն կողմից կրակելով կոտորում են նրանց, կենդանի է մնում հրաշքով մի հայ, նա էլ, շնորհիւ մի ժանդարմի: Պահապան ստրաժնիկները ձիերը քշում փախչում են առանց զէնքի դիմելու:

Այսօր Թուրքերը մինչև անգամ ծեծել են զինուորներին. վերջիններս պարծեալ զէնքի չեն դիմել: Ինչպէս երևում է, եթէ զինուորները ապրանքի փոխարէն բազարից մարդիկ—հայեր տեղափոխելիս լինէին, և Թուրքերը հայերին կամ գերէին կամ կրակէին—զինուորները պէտք է գային կրակելու համար գեներալից իրաւունք ստանային...

Աւ. Սահակեան

Յ. Գ. Իշխանութեան մեզ առաջարկած միջոցներով հաշտութեան մասին բանակցութիւնները աւելի ծանր է քան թէ ինքն կոտորածը: Մեզ ուզում են, որ գնանք համբուրվենք մեր ապրանքները թալանողների, մեր տները հրձիգողների հետ: Մեզանից պահանջում են, որ գնանք սեղմենք այն անձանց ձեռքը, որոնց վրա դեռ չէ ցամաքել մեր եղբայրների ու սրտակիցների արիւնը:

Այդպիսի հաշտութիւնն երբեք տևողական չէ կարող լինել, պէտք է պատժել յանցաւորներին, որոնց իշխանութիւնը շատ լաւ է ճանաչում:

Նոյն

Զարդախլուն կարողանում է քաջաբար պաշտպանվել և մեծ ջարդեր տալ թշնամուն: Գիւղից եկողները պատմում են, որ Զարդախլուեցիներին աջողվել է յետ մղել Թուրքերի բոլոր յարձակումները և ներկայումս պաշտպանողական դիրքից յարձակողական դիրք են բռնել ու նրանց մի [illegible] մասն էլ գերի են վերցրել:

Հաւանական է, որ Զարդախլուեցիները սկսեն յարձակում գործել այն ձմեռանոցների վրա, ուր պահված են Բաղանձորի հայ գերիները:

Բաղանձորը ամբողջապէս ոչնչացրված է, գիւղացիների մի մասը զոհ են գնացել կոտորածին, մի մասն էլ գերի են տարված Թուրք բէգերի մօտ. մեծ մասն էլ պատսպարվել են Զարդախլու գիւղում:

Երեկ հայերը մի վագօն ալիւր էին առել Բուգրով ազգանունով մի ռուսից: Բերելու ժամանակ Թուրքերն արգելել են, սպառնալով նրա ամբողջ ընտանիքը սրի անցկացնել, եթէ ալիւր կը ծախէ:

Խելակորոյս մի մայր գնում է Թուրքական թաղը իր որդու դիակը պտռելու, Թուրքերը խեղճ կնոջն անհետացրել են:

Աւ. Սահակեան

ՏՆԱՅՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ՄԵԶԱՆՈՒՄ

Վերջին 25 տարիների ընթացքում Եւրոպայում և Ամերիկայում մեծ նշանակութիւն են տալիս ձեռագործ աշխատանքին և արհեստներ են տարածում ամեն տեղ, գլխաւորապէս ժողովրդական ուսումնարանների և համալսարանների միջոցով: Թողնելով այդ հարցի նիւթական կողմը, պէտք է առաջ ասել, որ մանկավարժական տեսակէտից արհեստներն ունեն կրթիչ նշանակութիւն: Ուսումնարանների մէջ աւանդվող արհեստների համար ստեղծվել է որոշ մեթօդիկա, այսինքն որոշ աւանդելու ձև, որը զանազանվում է հասարակ արհեստաւորների աւանդելու ձևից և ամբողջը ստացել է մի սեփական անուն թէ Սկանդինաւիայում և թէ անգլիերէն խօսող ժողովուրդների մէջ—pedagogiska sloyd որը գուցէ կարելի է թարգմանել մանկավարժական ձեռարհեստ խօսքերով: Այդ դարձուածքով ուզում են ասել, թէ ժողովրդական ուսումնարաններում ձեռարհեստները մտցնվում են ոչ մասնագիտական տեսակէտից: Օրինակ, Շվեցիայի և Նորվէգիայի բոլոր տարրական ուսումնարաններում աւանդվում է փայտից իրեղէններ շինելու արհեստը: Բայց այդ բանը կարգադրողները բոլորովին ի նկատի չեն ունեցել, որ ամեն մի աշակերտից պէտք է խառատ պատրաստել: Խառատներ պատրաստելու համար կան առանձին մասնագիտական ուսումնարաններ: Իսկ տարրական ուսումնարանների մանկավարժները աչքի առաջ են ունեցել արհեստի կրթիչ նշանակութիւնը: Արհեստը արդէն ուսումնարանից սովորեցնում է երեխային սիրել և յարգել ֆիզիկական աշխատանքը: Շատերն են նկատել, որ թէ մեզ մօտ և թէ Ռուսաստանում գիւղից դուրս եկած կամ թէ նոյն իսկ գիւղական ուսումնարան յաճախած երեխաներին ամօթ բան են համարում կացինը կամ բահը ձեռք վերցնել: Ուսումնարանի այդ ազդեցութիւնը նկատելով, շատ ծնողներ չեն ուզում իրանց զաւակներին ուսումնարան տալ ասելով թէ «խանութ չէ բանալու, տէրտէր կամ չինովնիկ չէ դառնալու, մեզ վար անել է հարկաւոր, իսկ կարդալուց յետոյ երեխաները էլ չեն ուզում գիւղում աշխատել:» Նոյն պատճառներից դրդված մօլոկանները բոլորովին ուսումնարան չեն բանում իրանց գիւղերում:

Արհեստ իմանալը զարգացնում է երեխայի մէջ ինքնուրոյնութիւն, սովորեցնում է նրան կարգի, կանոնի, աշխատասիրութեան և մաքրասիրութեան: Արհեստի միջոցով ամրապնդվում, ուժեղացվում է մարդու մարմինը, մարդու աչքը սովորում է տեսնել, դիտել, իսկ ձեռքը սովորում է տեսածը կատարել: Եւ այդ բոլորը երիտասարդ սերունդը դարձնում է բարոյապէս աւելի ուժեղ, կեանքի համար աւելի պիտանի, քան թէ մեր այժմեան ուսումնարաններից դուրս եկած անտեղի հպարտ, ծոյլ, հեշտ կեանք որոնող երիտասարդութիւնը, որը դժբախտաբար որոշ չափով օրինակ է դարձել և գիւղի ազգաբնակութեան համար:

Հին ժամանակներից ի վեր հայը եղել է աշխատասէր: Բացի դաշտային և բուն գիւղատնտեսական աշխատանքից, նա տանը միշտ զբաղմունք է ունեցել, որը եղել է նրա համար մեծ նիւթական օժանդակիչ: Ձմեռը թէ ցերեկով, թէ երկար երեկոների ընթացքում ճիթաճրագի և աւելի ուշ՝ նաւթաճրագի աղքատիկ լուսաւորութեան տակ տղամարդը շինել է փայտից և կաշուից զանազան իրեր, որոնք անհրաժեշտ են տնտեսութեան համար, օրինակ կացնի և բահի կոթեր, սայլեր, կեռեր, դռների մասեր, գդալներ, թիեր, իլիկներ, ճախարակներ, օրօրոցներ, ճրագակալներ, կաշուից թամբեր, և այլ իրեր շատ անգամ պարզ, բայց շատ գեղեցիկ օրնամենտներով զարդարված:

Կանայք և աղջիկներ թէլ էին մանում, կտորներ էին գործում տղամարդի և կանանց հագուստների համար, շատ տեղերում գործում էին մետաքսէ ձեռ կարպետներ և թաշկինակներ, արծաթէ և ոսկեթելից ժապաւէններ էին գործում զգեստներ զարդարելու համար, էլ չեմ խօսում գուլպաների և կար ու ձևի մասին, որ կանայք, ի հարկէ, իրանք էին անում: Մի խօսքով, հայ ընտանիքը փող էր ծախսում միայն աղի, շաքարի, թութունի և նոյնանման ներմուծվող մթերքների համար և այդ պատճառով միշտ որոշ քանակութիւն ցորեն, դրամ, կամ ուրիշ մթերք կարողանում էր պահել նրան սպասող սև օրվայ համար:

Բայց զանազան պատճառներով տնայնագործութիւնը մեր գաւառներում սկսեց ընկնել և մի քանի տեղերում նոյն իսկ անհետացաւ: Այն իրեղէնները, որոնք առաջ գործվում էին մեր գիւղացիների և գեղջկուհիների ձեռքով, սկսեցին գործվել տարէց տարի զարգացող մայրաքաղաքների գործարաններում, իսկ երկաթուղիները հեշտացրին այդ իրերի ներմուծումը մեր երկրում: Ժողովուրդը տեսնելով, որ շատ աւելի հեշտ է խանութից տուն բերել պատրաստի իրեր, քան թէ ամեն ինչ տանը պատրաստել, սկսեց շրջակայից սկսած մինչև փայտէ գդալներին էլ, թիերին էլ փող տալ և ձեռք վերցրեց տնայնագործութիւնից:

Այդ երևոյթը, ի հարկէ, կարելի է անուանել կուլտուրական առաջադիմութիւն, բայց այդ առաջադիմութիւնը անշուշտ բերում է իր հետ և վտանգ:

Ճիշտ է, որ երբ տան մէջ ձեռքի աշխատանքը փոխվում է մեքենաների աշխատանքի—գոյանում է ժամանակի խնայողութիւն: Բայց խնայած ժամանակը միայն այն դէպքում է արժէք ստանում, երբ նա [illegible] այդ ժամանակը արդիւնքով է գործ դրվում:

Բայց երբ, ընդհակառակը, այն ժամ, որը առաջ գործ է դրվել արդիւնաբեր աշխատանքի համար, այժմ անց է կենում ծուլութեան և նոյն իսկ շատ տեղեր արբեցողութեան, բամբասանքի, կռւի և հայհոյանքների մէջ, այդ դէպքում այդ խնայած ժամը կորցրած պէտք է համարել թէ բարոյական և թէ քաղաքանտնտեսական տեսակէտից:

Աւելացրէք, որ ժողովրդի պահանջները տարէց տարի սկսում են աճել. նա պահանջ ունի թէյ խմելու, կոնֆէկտ առնելու, տրեխի տեղ կօշիկ հագնելու, շատ հագուստներ ունենալու, ձէթի կամ սև նաւթի տեղ կերօսին այրելու, (նոյն իսկ духи էլ են գնում) և հազար ուրիշ ծախքեր անելու: Իսկ նրա եկամուտը մնում է նոյնը, այսինքն մի անորոշ քանակութիւն ցորեն, գարի կամ այգեպատ տեղերում խաղող և միրգ—միայն այդ արդիւնքներով է նա պարտական թէ տուրք վճարել, թէ ամբողջ տարի ապրել: Հասկանալի է, որ շատ մարդ—արդէն մինչև յունվար, փետրվար իր ունեցած ցորենը կրում է խանութպանի մօտ, իսկ ինքը ապրում է պարտքով մի տարի, միւս տարի նա սկսում է ծախել ունեցած կովը երեխաներին ցամաք հացի թողնելով, ծախում է ունեցած գորգը երեխաներին չոր տափին թողնելով: Տարէց տարի աղքատանալով, նրանում ծնվում է քաղաք գնալու, պանդխտութեան միտքը—իսկ դա նշանակում է մահ ժողովրդի համար:

Դժբախտաբար, մեր ժողովուրդը արդէն մի քանի տեղերում հասել է այդ դրութեանը և մենք պէտք է շտապենք օգնութիւն հասցնել, որպէս զի ժողովրդի տնտեսութեան վերջնականապէս քայքայման առաջն առնենք: Վերջին տարվայ դէպքերը մեզ բոլորովին ժամանակ չեն տալիս երկար մտածելու: Մենք, կանայքս, անկարող ենք աւելի լուրջ միջոցների դիմել: Մենք չենք կարող երկրում երկաթուղու կամ խճուղու գիծ անցկացնել, չենք կարող երկրի չոր տեղերը ջրելու համար կանաներ և ջրանցքներ անցկացնել, չենք կարող մեծ շինութիւններ և մեծ ձեռնարկութիւններ սկսել, բայց անենք գոնէ այն, ինչ որ կարող ենք անել: Շտապենք վերականգնեցնել այն տեսակ տնային զբաղմունքներ, որոնք ստեղծել են մեր նախընթաց սերունդների համար մի որոշ նիւթական ապահովութիւն, բարոյականութիւն և աշխատասէր ազգի հռչակ: Ինչ մեղադրանքներ ասէք, որ մեզ վրա թափված չեն, բայց հայի ծուլութեան, ճրիակերութեան, արբեցողութեան և անբարոյականութեան մասին շատ խօսված չէ և չը պէտք է էլ թոյլ տալ, որ խօսվի:

Եթէ հարց ծագի, թէ ո՞րն է լաւ. վերականգնեցնել մեր երկրում եղած, բայց հանգչող արհեստները, թէ մտցնել նորերը, երևի մենք կը գանք այն եզրակացութեան, որ պէտք է դիմել այդ երկու միջոցներին, նայելով տեղին և հանգամանքներին: Չափահասների համար կարող ենք արդէն եղած արհեստների կուրսեր տալ, հում նիւթեր բաժանել, նկարներ և նմուշներ տալ, յետոյ գործած իրերը հաւաքել և ծախել: Իսկ երեխաների համար պէտք է հիմնել կանոնաւոր ուսումնարաններ, որտեղ նրանք կը սովորեն արհեստներ և կը ստանան այնպիսի կրթութիւն, որը կը պաշտպանէ նրանց անկումից, թէ ներկայում և թէ ապագայում:

Վերջին տեսակ գործունէութիւնը կը լինի, ի հարկէ, ամենահաստատը և կարևորը, որովհետև երեխայի հոգին և ուղեղը աւելի են մատչելի ամեն տեսակ ազդեցութիւնների համար, քան թէ չափահաս մարդունը: Այդ պատճառով աւելի հեշտ կը լինի երեխաների միջոցով նոր և նոր արհեստներ մտցնել ժողովրդի մէջ: Ապագան պատկանում է նոր, առողջ սերունդին, ուրեմն պէտք է, որ բոլոր հարցերը—լինեն նրանք կրօնական, քաղաքական, հասարակական թէ տնտեսական, ձուլվեն մի հարցում, այսինքն կրթութեան հարցում:

Բայց թողնենք ապագան և զբաղվենք մեր ներկայ դրութեամբ:

Նոյն իսկ վերջին հրդեհներից և աւերածներից ոչ վնասված տեղերում ինձ պատահած գիւղացիները և գեղջկուհիները մեծ համակրանք էին ցոյց տալիս դէպի ջուլհակութիւնը և շատերն էին ցանկանում այդ գործը սովորել, բայց դժբախտաբար ես յարմարութիւններ և գործիքներ չունէի շատ աշակերտուհիներ վերցնելու համար: Ջուլհակութիւնը մեր երկրում լուրջ կերպով տարածելու համար մենք պէտք է հիմնենք մի ընկերութիւն, որը ոչ միայն գործիքներ և նմուշներ տայ ժողովուրդին և գործված իրերը վերցնէ ծախելու համար: Այլ այդ ընկերութիւնը պէտք է մի որոշ ուղղութիւն տայ, պէտք է ղեկավարէ գեղարուեստական և ազգային տեսակէտից հայկական տնայնագործութիւնը: Այստեղ, Թիֆլիսում, ճարտարապետների, նկարիչների և հմուտ ջուլհակուհիների օգնութեամբ կարելի է բանալ մի օրինակելի գործարան, որը 1) կը գործէ նմուշներ հին հայկական ձեռագործներին և նկարներին նայելով, 2) հետևելով ժամանակի պահանջին և մի և նոյն ժամանակ պահպանելով մաքուր հայկական ճաշակը և ներկերը, կը տայ լաւ նմուշներ գաւառների համար: Ժողովրդի մէջ արհեստը տարածելու համար չիմացած մեթօդները սովորացնելու, նիւթ բաժանելու և գործվածքները գնելու համար մենք պէտք է ունենանք շրջիկ ուսուցչուհիներ կամ ուսուցիչներ, որոնք շրջելով կարող են ամեն տեղ կուրսեր տալ, նոր նմուշներ տալ և ամեն տեսակ աջակցել տնայնագործութեանը: Մենք պէտք է աշխատենք, որ մեր մտցրած արհեստը ժամանակաւոր բնաւորութիւն չունենայ, այլ նոյն իսկ անբախտ տարիները անցնելուց յետոյ մնայ ազգաբնակութեան մէջ և տայ նրան կողմնակի եկամուտ:

ՄԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Սկսած փետրվարից «Кавказъ» լրագիրը կը հրատարակվի երդուեալ հաւատարմատար Գ. Օզօչինինի խմբագրութեամբ նոր գրական ուժերի գործակցութեամբ: «Кавказъ»-ի նոր խմբագրութիւնը իր յայտարարութեան մէջ յիշատակել է մասնակցողների թւում և իմ անունը:

Այդ առիթով կարևոր եմ համարում յայտնել հետևեալը:

Ես իմ գրական գործունէութեան մէջ չափազանց բծախնդիր եմ եղել դէպի իմ մասնակցութիւնը զանազան հրատարակութիւնների մէջ, և աշխատել եմ ոչ մի առիթ չը տալ, որ իմ բռնած դիրքի և դաւանանքների վերաբերեալ ծագեն որ և է թիւրիմացութիւններ:

Այդ պատճառով ես դիմեցի պ. Օզօչինինին և խնդրեցի իմ անունը հանել յայտարարութիւնից: Ես լիովին համոզված եմ որ պ. Օզօչինինի խմբագրած լրագիրը կը լինի մաքուր և առաջադէմ լրագիր, բայց «Кавказъ»-ի մերձակայ անցեալը այնքան տխուր յիշատակներ է թողել մեր հասարակութեան մէջ և այնքան վատ գոյնով է ներկայացել նրա տեսութեան առաջ, որ նոր խմբագրութեան կողմից հաստատ ապացոյցներ են հարկաւոր թէ նոր «Кавказъ» ոչ մի կապ չունի հին «Кавказъ»-ի հետ, բացի վերնագրից: Ես լաւ գիտեմ, որ «Сынъ Отечества»-ն մի ժամանակ պահպանողական լրագիր էր, իսկ այժմ նա այնպիսի արմատական լրագիր է դարձել, որին կարող են բանակցել ծայրայեղ մտածողները: Ես գիտեմ, որ նոյն «Кавказъ»-ը Իւ. Միլլիւտինի օրով շատ վայելուչ մի լրագիր էր և ես յոյս ունեմ, որ այժմ էլ Օզօչինինի ղեկավարութեամբ նա կը դառնայ վայելուչ լրագիր, մանաւանդ, որ Օզօչինինը ունի մաքուր և լուսաւոր գրական անցեալ և նրա աշխատակիցները յարգելի անձնաւորութիւններ են: Բայց և այնպէս, չը ցանկանալով նոյն իսկ ժամանակաւոր թիւրիմացութեան մէջ պահել իմ անունը, ես հարկաւոր համարեցի նրան բոլորովին հանել խմբագրական յայտարարութիւնից:

Բայց ինչպէս է ծագել իմ մասնակցութեան հարցը: Ահա ինչպէս: Մի քանի շաբաթ սրանից առաջ Թիֆլիսում տեղի ունեցան մի քանի ժողովներ կազմակերպելու Թիֆլիսում սահմանադրական—ռամկավարական կուսակցութիւն Թիֆլիսում: Թէ նախնական խորհրդակցական ժողովներում և թէ ընտրված բիւրօյում ուրիշ անձերի հետ միասին մասնակցում էինք Օզօչինինն և ես: Խորհրդակցութիւնների ժամանակ հարց ծագեց սեփական օրգան ունենալու մասին: Այդ հարցը քննվեց մի քանի անգամ, բայց վերջնական լուծում չը ստացաւ: Իսկ պ. Օզօչինինը այդ ժամանակ վճռեց վերցնել «Кавказъ» լրագիրը և այնտեղ պաշտպանել սահմանադրական-ռամկավարական կուսակցութեան ծրագիրը: Նա դիմեց աջակցելու և ինձ: Ես յայտնեցի իմ համակրութիւնը: Եւ անկասկած ուրախ կը լինէի, եթէ կարողանայի օգտակար լինել լրագրին: Բայց նախնական յայտարարութեան մէջ իմ անուան լինելը կարող էր այնպէս հասկացվել, որ իբր թէ ես խմբագրական գործերին մօտ մի անձ եմ և ազդում եմ լրագրի վրա, կամ մասնակցում եմ խմբագրական խորհրդակցութիւններին:

Ես լսել եմ Օզօչինինից համակրելի խորհրդածութիւններ իր առաջիկայ գործունէութեան մասին և մաղթում եմ նրան աջողութիւն. բայց քանի որ հասարակութեան առաջ չը կայ հին «Кавказъ»-ի տեղ նորը, քանի որ նոր լրագիրը իրապէս մեր հասարակական հոսանքների մէջ դեռ չէ գրաւել—ես չեմ ցանկանում այնպիսի մի փաստ տեղի ունենայ, որ իմ վերաբերեալ որ և է նոյն իսկ հեռաւոր թիւրիմացութեան առիթներ տրված լինեն:

Ա. Քալանթար

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԴՈՒԼ

Ռոստովից դեկտ. 7-ին ուղարկված է հետևեալ հեռագիրը. «Հայրենիքը վտանգի մէջ է. Ցարի կառավարութիւնը, չը նայելով որ խոստովանվեց որ զարթնած ժողովուրդն ունի քաղաքացիական իրաւունքներ, չի դադարեցնում բռնութեան ու հեղնութեան իր նախկին քաղաքականութիւնը ուղղված ու սովատանջ հայրենիքի վրա: Համբերութեան բաժակը լցվեց: Պետերբուրգի և Մոսկվայի Բանւորական Խորհուրդները, 29 երկաթուղիների Խորհուրդը և համառուսական երկաթուղիների Կենտրոնական Կոմիտետը Մոսկվայում համաժողով կազմելով, որոշեցին՝—սկսել համառուսական ընդհանուր քաղաքական գործադուլ 1905 թւի դեկտ. 7-ին: Ամբողջովին միանալով այդ որոշմանը, Ռոստովի Բիւրօն առաջարկում է հետևեալը. գործադուլն սկսվում է դեկտ. լոյս 8-ի գիշերվայ 12 ժամից: Գործադուլը ուր որ վրա հասաւ ապրանքատար գնացքներին, այդ տեղից պէտք է տանել մինչև առաջիկայ մեծ կայարանը, տեղական բիւրօների բարեհայեցողութեան համեմատ: Մարդատար գնացքները տարվում են մինչև մեծ կայարանները ամբողջութեամբ: Պահեստի զինւորների և սովատանջ գաւառների համար հաց տանող գնացքներն անց են կենում անարգել: Տեղական բիւրօները կազմակերպում են ցեխի բանւորներին իրանց բարեհայեցողութեամբ պաշտպանութեան համար և... (այստեղ հեռագիրն ընդհատվում է)

(К. Р. Л.)

ԱԿԱՄԱՅ ՊԱՏԱՍԽԱՆ

Ստիպված եմ պատասխանել «Արշալոյսի» խմբագրին, որովհետև Շուշւից ես նրան գրել եմ մի թէ երկու նամակ և նա այդ նամակներով աշխատում էր «մերկացնել» ինձ...

Այո, գրել եմ մի թէ երկու նամակ, որոնք եղել են պատասխան պ. Մ. Ղարագեօզեանի ինձ ուղղած հրաւէրին՝ մասնակցելու իր „Кавк. Вѣстникъ" ամսագրում: Ոչ միայն նամակներ գրել, այլ և «Թիւրքիայի երկաթուղիները» վերնագրով մի յօդւած էլ ուղարկել եմ:

Չեմ թագցրել երբեք և այժմ էլ չեմ թագցնում—այդ նամակում ես ցաւ էի յայտնել Շուշւից, որ «Մշակ»-ը մնացել է միակ թերթը և մօնոպօլ է դառել:

Այդ բոլորը գրելուց յետոյ, ես խօսք եմ տուել պ. Մելիք—Ղարագեօզեանին մասնակցելու „К В"-ում:

Շուշւում եղած ժամանակ ես ծանօթ չէի պ. Մ. Ղ-ի հետ. տեսել էի միայն մի անգամ, պատահմամբ, կարծեմ մի ժողովում:

Եկայ Թիֆլիս, աւելի մօտիկ ծանօթացայ նրա հետ: Կազմեցի որոշ համոզմունք նրա մտաւոր ու հոգեկան պատրաստութեան մասին: Եւ երբ նա հրաւիրեց ինձ մասնակցելու իր «Արշալոյսում», ես խուսափողական պատասխան տուի. «դեռ մի-երկու ամիս հրատարակեցէք, տեսնենք ինչ դուրս կը գայ, այն ժամանակ գուցէ մասնակցեմ»:

Ամեն ընկերական շրջանից դուրս նետված, Թիֆլիսի բոլոր մեռած ու դեռ կենդանի խմբագրութիւններից խայտառակութեամբ արտաքսված մի անձ, թաքնվելով «X ճառագայթներ» դիմակի տակ, օգտվել է Մ. Ղ.-ի սուտ նիւթերով և ուզեցել է իմ անունը խծբծել... Դուրս է եկել մի անմիտ բան, վայել տաղանդաւոր—խմբագրի վերջալոյսին մօտեցած օրգանին.

Շուշւում էի. պ. Մել.—Ղար.-ին չէի ճանաչում—խօսք տուի մասնակցելու նրա թերթում:

Եկայ Թիֆլիս, ճանաչեցի, տեսայ թէ ինչ մտաւոր, հոգեկան ու բարոյական սնանկութիւն է ներկայացնում այդ պարոնը, չուզեցի մասնակցել նրա հրատարակելիք ոչ մի թերթին:

Մի՞թէ դրա համար կարելի է մարդու հայհոյել...

Խաժակ

ԻՐ ՏԱԿՍԱՆ ՉԷ

(Նամակ Բագուից)

Հոկտեմբերի 30-ին

Մեր ժամանակը եղել է տարօրինակ երևոյթների մայր: Օր չի անցնում, որ մենք ականատես չը լինենք, չը լսենք այն երևոյթների մասին, որոնք՝ իրանց ամբողջութեամբ՝ ցաւ ու զարմանք են պատճառում:

Մենք, հայերս, ներկայումս ապրում ենք այնպիսի յուսահատ ու անմխիթար ժամանակում, շրջապատված այնպիսի աննպաստ պայմաններով, որոնց դէմ մաքառելու համար բաւական չեն անհատները: Մեր ժողովրդի մեծամասնութիւնը ներկայ րոպէին տառապում, խեղդվում է ծով թշուառութեան մէջ և մօտ է ազգային ինքնուրոյնութեան կորստի սահմանին: Այդ գիտեն բոլորը: Բայց բաւական չէ միայն իմանալ, խօսել, այլ պէտք է աջակցել, խօսքից՝ գործի անցնել: Իւրաքանչիւր բանիմաց, գիտակցող, ազգային իրաւունքները և պատիւը գերադասող մարդու սրբազան պարտականութիւնը պէտք է լինի այդ ծով թշուառութիւնից մի կաթիլը իր վրա վերցնելու, այլապէս ասած՝ օգնելու ով ինչով կարող է:

Կրկնում ենք, հայութեան ճակատագրի այն momentն է, երբ պէտք է ասպարէզ նետվեն գրողը՝ իր գրչով, հերոսը՝ իր քաջութիւններով, հարուստը՝ իր փողով, քահանան՝ իր սրբազան կոչումով և այլն: Եւ ահա այդ ժամանակ միայն, այդպիսի միացեալ ույժերով կարելի կը լինի թշուառութիւնը ամոքել և, առնենք աւելին՝ ազգի բաղդը վճռել:

Սակայն թողնենք իրականութիւնը, վերապահելով մեր խօսքը առաջինների մասին, ի նկատի առնենք քահանայական դասը (բացառութիւնների մասին խօսք լինել չի կարող) և տեսնենք, թէ արդեօք ծառայում են դրանք իրանց կոչման, կատարում են քահանայական ամենատարրական պարտականութիւնները, թէ երբեմն այնպիսի երևոյթների հեղինակ են լինում, որ խուլիգանութիւնը փառք կը տանի: Մենք այստեղ կանգ առնենք միայն քահանայական դասի վրա հէնց նրա համար, որ քահանան ազատ է և մուտք ունի ամեն տեղ, գործ ունի հարուստի, աղքատի և թշուառի հետ, հետևապէս դրան, քան մի ուրիշին լաւ յայտնի կը լինի մեր ժողովրդի այն տառապալից կեցութիւնը, որի ճիրաններն մէջ մրգվում, խեղդվում են հազարաւոր կեանքեր...

Մեզ շատ անգամ է պատահել ականատես լինել, թէ ինչպէս պսակադրութիւնների, մկրտութիւնների և թաղումների ժամանակ քահանան սակարկութեան մէջ է մտնում ծխականի հետ, երբ չեն վճարում իր մասագրված վարձագինը: Կար ժամանակ, երբ քահանայական այդ կապրիզը կարելի էր լինում տանել, մի կերպ հաշտվել, եօլայ գնալ, որովհետև մեր շուրջը չէր փռված գազանութիւնների հարուածների սոսկալի խրողութիւնը, որովհետև մեր հայկական իրականութեան հորիզոնը դեռ չէր մայլվել այս օրինակ, որովհետև մեր չորս կողմում չէին կատարվում ճիւաղային կոտորածներ, խուլիգանական ալան-թալաններ, հազարաւոր ընտանիքների թշուառացումներ և՝ էլ ո՞ր մէկը թւեմ:

Եւ այսպիսի մի ժամանակ դարձեալ քահանայական և միմիայն քահանայական կապրիզ: Լսեցէք, ընթերցող:

Ամսիս 5-ին գիշերը Սպիտակ քաղաքում անյայտ չարագործները մորթում են մի հայ խանութպանի իր վրացի հարևանի հետ մի սենեակում քնած ժամանակ ու թալանում տանում ունեցածները: Թէ ինչ պայմաններում է տեղի ունեցել սպանութիւնը, մեզ գոնէ՝ անյայտ են մանրամասնութիւնները: Այդ թողնում ենք ապագայի նիւթ, երբ քննութիւնը մի որոշ եզրակացութեան կը գայ: Առ այժմ խրողութիւնը այս էր, որ մորթված է մի հայ մարդ, որը գլուխ էր մի ամբողջ ընտանիքի—կոյր մայր, այրի քոյր՝ երկու որբերով, որոնց միակ կերակրողը ինքն էր:

Մեր գրութեան հէնց սկզբում ասացինք, որ «մեր ժամանակը եղել է տարօրինակ երևոյթների մայր»: Եւ իրաւ, մի՞թէ տարօրինակութիւն չէ, որ մարդ տարիներով տանջվում, չարչարվում, աշխատում է և բացի այն, որ իր մեռնելուց յետոյ թշուառացած ընտանիքի համար ապրելու ոչինչ չի մնում, այլ նաև անհրաժեշտութիւն է զգացվում հանգանակութեան դիմել՝ թաղման ծախսը հոգալու: Եւ երբ բարերար մարդիկ իրանց կոպէկները չեն զլանում իր նմանի վերջին ծախսը հոգալու, մեր քահանայական դասը, գիտակից և ականատես բոլոր դառնութիւններին, հանդէս է գալիս դարձեալ իր քարային անզգածութեամբ, իր կապրիզներով:

Օրինակը տանք:

Հարևան խանութպանները աստուածահաճոյ իմանալով անլուր ոճրագործութիւնը, իմանալով, որ ունեցածը թալանել է, իրանց մէջ փող են հաւաքում թաղման ծախսերի համար, հրաւիրում են այդ մասին ծխատէր Ներսէս քահանայ Տէր-Կարապետեանցին և տանում, յանձնում են նորին: Թաղման ծիսակատարութիւնը վերջանալուց յետոյ Պ. Ա., Ղարախանեանցը—որին յանձնված է եղել ծախսարարի պաշտօնը—տալիս է տէրտէրին 5 րուբլի թէ թաղման գին և թէ կարգի փող. սակայն դա հրաժարվում է վերցնելուց ասելով, որ վերջացրէք կառապանի հետ ինչպէս ուզում էք, իսկ իմ համնելիքը առանձին տուէք: Ընդունում են այդ առաջարկութիւնը: Կառապանին վճարում են երեք րուբլի, տիրացուին մի րուբլի և երկու րուբլի էլ տէրտէրին: Բայց դարձեալ հրաժարվում է, առարկելով, որ դա իր տակսան չի: Թէ ինչ դժուարութիւններով և ինչ դժգոհութիւններով կարելի է լինում երեք րուբլով համոզել, մենք այդ աւելորդ ենք համարում ամբողջապէս առաջ բերել:

—Ահա ձեզ մեր քահանայական դասի պարտաճանաչութիւնը:

Ինչպէս տեղեկացանք, Ներսէս քահանան մի կատարեալ չարիք է որ տակաւին Սպիտակ քաղաքացիների համար:

Փաստեր են հարկաւոր, ահա շատերից մի քանիսը:

Պ. Բ. Դանիէլեանցը իր երեխայի մկրտութեան համար տալիս է վեց րուբլի, բացի կառքի փողը, բայց տէր հայրը ոչ մի կերպ չի համաձայնվում վերցնել, դարձեալ իր տակսան առաջ բերելով և աւելացնում է, թէ ցաւ չէ, որ ինքը (Դանիէլեանցը) պակաս է տալիս, այլ որ՝ ուրիշների համար օրինակ է լինում: Պ. Բ. Դանիէլեանցը չի կարողանում տանել տէր-հօր այդ օրինակ կամայականութիւնը և տեղն ու տեղը հրաժարվում է դրա ծխականը լինելուց ու խնդրում է, որ այլևս իր տունը ոտք չդնի, հակառակ դէպքում ստիպված կը լինի վատ վարել:

Լևոն Բուրղիևանցի երեխան երեք ամսական է, բայց դեռ չի մկրտված: Իմ հարցին, թէ ինչու չէք մկրտում, պատասխանեց, «ինչպէս մկրտել, տէրտէրը քչով չի բաւականանայ, ես էլ իր ուզածը տալ չեմ կարող»: Հարցըրի, ինչպէս թէ «տէր-տէրը քչով չի բաւականանայ»:

Ահա թէ ինչպէս: Եւ նա սկսեց մի առ մի թւել, որ Մարկոսը երեք րուբլի է տուել, Նիկոլոսը չորս րուբլի և այլն, բայց տէր-տէրը միշտ դժգոհ է մնացել:

Խաչատուր Յարութիւնեանցի երեխան հինգ ամսական է և դարձեալ չի մկրտված, միևնոյն հանգամանքների շնորհիւ, ինչ վերև ասացինք:

Աւելի սուր փաստ: Ն. Դանիէլեանցը միանգամայն զզված Ներսէս քահանայի պահանջկոտ վարմունքից, մի քանի ամիսներ շարունակ երեխային պահում է առանց մկրտելու, մինչ գնում է Շուշի և այնտեղ մկրտում:

Է՞լ առաջ բերենք. սակայն կարծում ենք, այս էլ բաւական է:

Կարևոր ենք համարում աւելացնել, որ ծխականներից մի քանիսը մտադրվել էին վարդապետին ներկայանալու, բողոքելու Ներսէս քահանայի այդ ձև վարմունքի համար: Ներկայացա՞ն արդեօք, թէ ոչ, ժամանակ չունեցանք տեղեկութիւն իմանալու:

Գուրգէն Աղայեանց

ՈԼԻՄՊՈՍԻՑ ՈՐՈՏԱՑՈՂՆԵՐԻՆ

Վաղուց ի վեր մեզ հալածում էին: Հալածողները նման էին բորենիներին, գիշերային գիշատիչներին որոնցից նոյնպէս վաղուց ի վեր դադար չունէին բնակիչներն Այրարատ Դաշտի:

Անապատից դուրս եկած չար ոգիներ էին նրանք, որոնք բարեշինութիւնը պղծելու, ապականելու դիւապաշտօնն ունէին: Դրանք շահատակեցին մեր երկրի վրա:

Առաջինը մի էգ դև էր, մի նազելի ալկին, որսկան բարակներն եռևից, սրանց պարաններն իր բռում ժողոված: Երկրորդը մի ահռելի վիշապ դև էր. սա մեր վրա ընկաւ իբրև մի գամփռ, մի վայրագ գազան: Բայց գերապակային երրորդն էր, որի ձեռագործած աւերքի տակ անյուշ անյիշատակ կորան իր նախորդի չարագործածները:

Շատ էինք կրել ու համբերել, էլ արդէն բաժակը լիքն էր. մենք վերջապէս ճաքվում էինք զայրոյթից: Մի օր կտրիճները սարերի վրա չարաչար ծեծեցին գլուխն այդ չարանենգ, այդ չարապիղծ, այդ սևապիղծ, այդ սևասիրտ, ատելութեամբն անյաղթելի այդ դաժ դևի: Նա գնաց վնկվնկալով, գնաց կորաւ անդարձ ոչ սակայն առանց երդվելու՝ եղծել ջնջել մեր անուան գիրն երկրի երեսից, ազգերի գրքից:

Վրան տարի դեռ չէր անցել, մի ձմերային առաւօտ մենք մեր աչքերը բաց արինք գնդակների սուլոցի, արիւն-ողողի, աւար-կողոպուտի, հրդեհների ծուխ ու բոցի, գազան մարդադաւերի, անսիրտ դիտողների, անկարեկից հանդիսականների և ամեն տեսակ արհաւիրքների մէջ: Դժոխքը հեղեղվել էր երկրի երեսին, մեզ լափելու, մեզ սրբելու, տանելու:

Սրել, գազանացրել ու մեր վրա բաց էին թողել թաթարներին:

Այո, ոլիմպականներ, թաթարներին, մեր հարևաններին, մեր դուռ-դրկեցին, մեր քիրվաներին, մեր դոնշիներին, որոնք աւելի մեզնով ապրում՝ քան մենք իրանցով:

Մի զարմանաք, բարձրից դիտողներդ: Խաւար ամբոխին մոլեռեցնելը հեշտ է: Հայն—հաւատացրին նրանք այդ ամբոխին—ուզում է և արդէն պատրաստ է քո կրօնքը խայթել, բա դու վեր չես կենայ նրա գլուխը ճզմելու. Նրա գոյքը քեզ հալալ, նրա կինն ու աղջիկն էլ: Մենք քեզ արգելք չենք լինի, ոչ էլ պատիժ կը տանք քեզ:

Գողն ինչ կուզէ.—մութ գիշեր: Գայլն ինչ կուզէ.—մշուշ օր: Եւ ամբոխը շարժվեց, արիւնկայ պարագլուխներն առջևից:

Բայց դուք, հեռուից դիտողներդ, որոնց լուսաճերմակ ձորձի վրա չեն ցայտում արեան շիթերը և որոնց ականջին չէ լսվում աղիք կտրատող մռմռոցը մայրերի, երբ նրանց աչքի տակ մորթոտում են և ծծկեր մանուկին և առոյգ կտրիճին, դուք զայրացած էք երևում ներքևում կատարվող խուժադուժ տեսարանից և ձեր շանթերը—մեծադղորդ դարերի անհատնում կարկուտ—անխտիր թափում էք և՛ անմեղ զոհի, և՛ մեղաւոր զոհողի գլուխներին: Երևի այդպէս մօտ չը կանգնելով էք և միայն հեռուից դիտելով ու ձախ ու ծուռ լուրերի հաւատալով էր՝ որ իւրաքանչիւրը ձեզանից արձակութիւն տալով իր փայփայած կրքերին, տրովադացիների կողմը բռնեցինք, միւսներդ աքայեցիների: Իսկ այստեղ կարծես ամենքդ, սակաւիկ բացառութեամբ, միմիանց բերան էք թքել—ներեցէք, նրբաճաշակ ոլիմպականներ, զոմոտ ոլորքից արձակած այդ գռեհիկ բացատրութեան—հա, միմիանց բերան էք թքել մեզ մրելու, մեզ մեղադրելու, միջնադարեան խաւարի ծոցից անմաքուր արտադրութիւն մեզ համարելու:

Ձեզ վայել չէր, բարձր կատարներից մեր վրա ներքև նայողներ, ձեզ վայել չէր նայել սուրբ ձեր տեսութեան տակ պարզված կռուադաշտի վրա ջոկել չը կարողանալ թէ ով է աւազակօրէն գործողը և ով աւազակին զինաթափ անել նկրտողը: Մի՞թէ վայել է ձեր աստուածային կարողութեանը, մի՞թէ վայել է ձեզ, իբր թէ գեղեցիկ արշալոյսի՝ գոյների վրա նստածներիդ, մի՞թէ վայել է ձեզ այդպէս կարճ տեսնել, ըմբռնել, կարճ մտածել, կարճ դատել և անիրաւ դատապարտել:

Դատաւո՞ր էք, ո՜վ աստուածներ, թէ դատախազ:

Խաղաղարա՞ր էք, թէ որոմնացան, թէ խռովարար, թէ խաղմարար:

Ի՞նչպէս է որ չը տեսաք ու չէք տեսնում, կամ, աւելի թերևս հաւանական, տեսնել անգամ չէք ուզում թէ—դարձեալ ներեցէք բացատրութեանս—ուր է թաղված շան գլուխը:

Գիտէ՞ք, ոլիմպականներ, քիչ է մնում հաստատ հաւատանք, թէ ձեր համակրութիւնը գառագեղներից դուրս արձակած գազանների կողմն է, որոնք ներոնեան կրկէսներում մեր վրա են ընկնում, մեր վրա են ընկած ծուիկ-ծուիկ պատառելու: Քիչ է մնում հաւատանք թէ դուք ծափահարում էք. քիչ է մնում հաւատանք թէ մերթ ընդ մերթ երևացող ձեր զայրոյթը կեղծաւորութիւն է. քիչ է մնում հաւատանք թէ ոլիմպոսական կատարները ձեզ նեղ են գալիս և դուք մեր դաշտերին էք աչք տնկել, մեր վերանալով ձեր տեղը լայն գտնել:

Թէև աստուածներ էք դուք, բայց ապացոյցներ շատ էք տուել և շարունակում էք անպակաս տալ, թէ մարդկային կրքերով խմորված էք և դուք: Չեմ թւահամար անում քո արարածներին, Արամազդ. ոչ էլ քոնն եմ համարում, ով Արէս և կամ քոնը, ով Հերմէս. իսկ դու, գեղանի Աստղիկ, թանձր քող քաշիր երեսիդ: Ներեցէք միւսներիդ անունը չը յիշատակելուս, շատ երկար կը լինէր, թէև համով-հոտով են բոլորիդ էլ մասին բանաստեղծների զրոյցները:

Ասացէք հիմա, ոլիմպականներ. ուրեմն դուք արդարն, ուղիղը և դէպի արշալոյս տանող ճանապարհն այն կը համարէք, որ գազանները մեզ պատառեն ներոնեան կրկէսներում, իսկ մենք սուր կամ նիզակ և կամ լախտ չը խաղացնենք, մեր անձը չը պաշտպանենք, մեզ կուլ տալու պատրաստված վիշապի վրա յարձակմունք չը գործենք, մեր վրա ընկած սովալլուկ գայլերի բերանը չը պատառենք, աղիքները չը թափենք, որ ինչ է ձեր աչքին բարեմունդ երևինք և դէպի արշալոյսը դիմելու արժանաւոր: Բայց, աստուածներ, մի՞թէ այնքան բարձր էք, որ ձեր աչքը չի կտրում. թէ գազաններն իրանք մեզ լափում են. էլ ո՞ւր է մնում մեզ համար լոյսը, ո՞ւր արշալոյսը:

Հա՛, դուք աղաղակ էք բարձրացրել թէ ձեր աստուածուհիներն ու աստուածամանուկներն էլ քուն չունեն. մենք մեր բարբարոսութեամբ նրանց քունը կտրել ենք:

Է՛հ, անդորրասէր, փափկասրտիկ աստուածներ, շատ ենք ցաւում ու բողոքում, որ գիշատիչների ճանկերում ապականված, պղծված, պատառոտված մայրերի վայնասունը, մանուկների ճիչը, կոյսերի հառաչն ու թառաչը հասնում ու քնախանգար են անում ձեր սիրասունունդներին: Բայց ասացէք, ի սէր ձեր Աթենաս-Պալլասին, ինչպէս անենք, որ լեղապատառ ճիչ չարձակեն մեր մանուկները՝ մինչ սովալլուկ գայլերի վոհմակներ, արիւնռուշտ բորենիներ, երկրի ծակ ու ճեղքերից, սարից ու ձորից, քարից ու քոլից հա դուրս են վխտում, հա դուրս են վխտում, հեղեղի նման խուժում, լափում ու լիզում, գերում ու գերփում և յետ իրանց որջերն են դառնում դժոխային հարսանիքի, սանդարամետական խնջոյքի:

Գէթ օգնէիք մեզ, ով աստուածներ, որ հալածէինք, պատժէինք շուտով և վերջ տանէր ձեր սիրասունների անքնութիւնն էլ, մեր ողբով լի մայրերի լացն ու կականն էլ:

Բայց ոչ, աստուածներ, դուք, երևում է, ողորմած, կարեկից, արդար, շիտակ լինելը քաղաքագիտութեան հետ փոխել էք: Յօգուտ մեզ՝ դուք ձեր նիզակները ձեր վահանների վրա չէք հնչեցնում, որ գայլերը չը լսեն, չը խոժոռին ու Ոլիմպոսն ի վեր չը շահատակեն: Դուք քաղաքագիտօրէն դեռ աւելին էլ էք անում. դուք ձգտում էք, ձեր լեզուից ու շարժումներից դատելով, դուք ձգտում էք համակրութեան նման մի բան էլ ցոյց տալ գայլերին: Թէ ասեմ ընդունակ չէք, ձեր աստուածութեան դէմ մեղանչած կը լինեմ. ուրեմն ընդունակ էք, միայն թէ քաշվում էք աւելի մօտիկից դիտել ու տեսնել, քննել ու իմանալ թէ ուր է թաղված շան գլուխը: Աւելի լաւ էք համարում անգէտ մնալ՝ որ դատավճիռ տալու հարկի տակ չընկնէք. աւելի քաղաքագիտական էք համարում մեզ ևս մեղաւոր կարծել գայլերին հաւասար:

Եւ ահա դուք խրատ էք կարդում մեր գլխին, մինչ մենք շատ խրատված ենք անցեալից ու ներկայից և լաւ էլ գիտենք որտեղ է Քարիբդան և որտեղ է Սկիլլան մեզ համար և կամ, եթէ թոյլ կը տաք մեր ռամկերէնով ասեմ, մենք գիտենք, թէ երբ է էրվում շամփուրը և երբ խորովածը. կամ, աւելի հասկանալի, երբ պէտք է խփել պայտին և երբ բևեռին:

Հեռաւորութեամբ ոգևորված, ով ոլիմպականներ, դուք խրատից անց էք կենում և սպառնալիքներին էք դիմում: Դուք մեզ սպառնում էք, իբր թէ մենք, գայլերի հետ կռւի բռնված, խոյընդոտ ենք ընկել դէպի վարդագոյն Արշալոյսն առաջնորդող ճանապարհի վրա. և նկատել էք տալիս, որ իբր թէ մենք միջնադարեան խաւարի բարբարոսներից ենք, այն ժանգոտ ժամանակի բորբոսներով ծածկված:

Ձեր լուսացնցուղ, ձեր սրբասուրբ փէշերն համբուրեմ, ով աստուածներ. ցոյց տուէք մեզ խտրութիւնը այն կռւի, որ ուրիշները—մենք էլ նրանց հետ հաւասար—մղում են վարչագրասենեակային տիտանների դէմ՝ տապալելու համար այն վիթխարի ցուցանքը, որ Արշալոյսի առաջքը բռնել՝ խափանել է կենսածաւալ շողերի ճառագայթումը մեր երկրի վրա, և այն կռւի, որ մենք՝ ձեր աչքում միջնադարից պոկ եկած բարբարոսներս՝ մղում ենք մեր վրա հորդան տուած, մեր վրա խուժած մարդագայլերի դէմ, որոնք խցում են ճանապարհն ոչ միայն դէպի Արշալոյս, այլ և դէպի լոյսը ճրագի:

Ցուցէք մեզ այդ, աստուածներ, և ցուցէք մանաւանդ թէ մեր տեղում դուք ինչ կանէիք: Ցուցէք մեզ այդ, և ապա աշխարհի խաղաղութիւնը և Ոլիմպոսի բոլոր բարիքը ձեզ հետ:

Ա. Մ. Եսեկեան

Թիֆլիս, դեկտեմբեր 6:

ՆԱՄԱԿՆԵՐ ԽԻՎԱՅԻՑ

I

Պետրո-Ալէքսանդրովսկ, նոյեմբ. 20-ին

Որքան յիշում եմ, մեր գրականութեան մէջ չը կան տեղեկութիւններ Խիվայի հայերի մասին, թէ արդեօք հին ժամանակներից ի վեր բնակվե՞լ են այստեղ հայեր, և եթէ եղել են երբ և որտեղից են գաղթել, որքա՞ն էր նրանց թիւը և առհասարակ ինչպիսի մտաւոր և տնտեսական դրութիւն են ներկայացրել: Չը կան տեղեկութիւններ նաև ներկայումս այստեղ հայերի մասին: Այստեղի հայերի մասին տեղեկութիւններ չլինելը գլխաւորապէս, ի հարկէ բացատրվում է նրանով, որ Խիվայի խանութիւնը գտնվելով մեկուսացած, կանոնաւոր հաղորդակցութեան ճանապարհներից հեռու չի գրաւել մեր գրականութեան հետ շփվող անձերի, որոնք ծանօթացնէին ընթերցող հասարակութեանը նաև հայոց այս գաղթականութեան հետ:

Նշանակված լինելով Բուխարայի և Խիվայի հայերի հոգևոր հովիւ՝ ես ներկայումս շրջելով Խիվայի հայաբնակ քաղաքները, աւելորդ չեմ համարում մի քանի համառօտ տեղեկութիւններ տալ «Մշակ»-ի ընթերցողներին Խիվայի հայերի մասին:

Խիվայի խանութիւնը տանող միակ և համեմատաբար յարմար ճանապարհը համարվում է Ամու-Դարիա գետը, որը նաւագնացութեամբ կապում է Չարջույը Պետրո-Ալէքսանդրովսկ քաղաքի հետ: Այդ ճանապարհը գետի վրայով թէև 410 վերստ տարածութիւն է բռնում, սակայն շնորհիւ գետի մի քանի առանձնայատկութիւնների նա միանգամայն անտանելի է դառնում: Ամու-Դարիան, որ Թուրքեստանի ամենամեծ գետն է, թէև շատ մեծ, բայց և շատ ծանծաղ գետ է: Հոսելով մեծ մասամբ տափարակ տարածութեան վրայով, նա սաստիկ տարածված է այդ պատճառով և սաստիկ ծանծաղ, այն աստիճան, որ համարեա ամեն քայլափոխում գետի յատակը բարձրանում է մակերևոյթից և կազմում է անթիւ կղզիներ: Ամառը գետը վարարելով ծածկում է հարևան ափերը մի քանի վերստ տարածութեան վրա և այդ ժամանակ գետը համարեա ծովի տպաւորութիւն է թողնում: Ամու-Դարիայի վրա բանում են պետական փոքրիկ շոգենաւեր, որոնք սովորաբար գնում են շատ դանդաղ և զգոյշ, այն էլ միայն ցերեկները, իսկ գիշերները, որտեղ էլ պատահի, մօտենում են ափին և կանգնում են մինչև առաւօտ: Ցերեկներն էլ գնալիս միշտ նաւի ծայրին երկու նաւաստի կանգնած անդադար չափում են գետի խորութիւնը, որովհետև հակառակ դէպքում նաւը պատրաստ է ամեն րոպէ խրվել աւազի մէջ: Չընայելով այդ բոլոր նախազգուշութիւններին, այնուամենայնիւ շատ յաճախ պատահում է, որ նաւը խրվում է աւազի մէջ և այդպիսի դէպքերում նաւը շատ անգամ մի քանի օր կանգնած է մնում միևնոյն տեղում, մինչև կարողանում է մի կերպ դուրս գալ ծանծաղ տեղից և շարունակել իր ճանապարհը: Այդպիսով յիշեալ 410 վերստ տարածութիւնը, որ կանոնաւոր շոգենաւային երթևեկութեամբ մի օրում էլ կարելի է անցնել, այստեղ 3—4—5, երբեմն էլ աւելի օրեր, այն էլ գետի հոսանքով, իսկ հոսանքի հակառակ, այսինքն Պետրո-Ալէքսանդրովսկից դէպի Չարջույ պատահում են դէպքեր, որ 10 օրից էլ աւելի է տևում ճանապարհը:

Ամու-Դարիան Չարջույից մինչև Պետրո-Ալէքսանդրովսկ հոսում է մեծ մասամբ միապաղաղ տափարակ և աւազոտ դաշտերի միջով. գետի երկու ափերն էլ միօրինակ և ձանձրալի պատկեր են ներկայացնում. չը կան ոչ բարձր լեռներ և ոչ էլ պարտէզներ կամ արտեր, չը կայ բնակութիւն: Երբեմն միայն այդ աւազոտ անապատների մէջ երևում են բնիկների հատ-հատ գիւղերը, որոնք իրանց ցեխից շինած խղճուկ տներով կատարեալ անդրջրհեղեղեան բնակութիւնների տպաւորութիւն են թողնում: Ամու-Դարիայի ափերում բնակութիւններ չը լինելը բացատրվում է նրանով, որ ջուրը սպառնում է ամեն րոպէ փոխել իր ընթացքը և ծածկել այդ տները. այդ պատճառով բնակիչները չեն վստահանում գետի մօտ բնակութիւններ շինել:

Ամու-Դարիան շնորհիւ իր մեծութեան և յիշեալ առանձնայատկութիւնների, որով նա բազմաթիւ օգուտների հետ նաև անչափ վնասներ է պատճառում շրջակայ բնակիչներին՝ հին ժամանակներից ի վեր մի տեսակ ահ է ներշնչել տեղիս բնիկներին, որոնք և պաշտելիս են եղել նրան իբրև մի խորհրդաւոր ոյժի: Այդ կողմից Ամու-Դարիան իրաւացի կերպով համեմատում են Նեղոսի հետ: Պատմում են մի դէպք, որ երբ ռուսները տիրելով Միջին-Ասիային առաջին անգամ երկաթուղի անցկացնելիս՝ Չարջույի մօտ, գետի վրայով շինում են երկաթուղու համար փայտէ կամուրջ, այդ բանը միանգամայն անհաւատալի է թւում գետից հեռու ապրող բնիկներին, որոնցից մի ծերունի պատասխանում է, թէ մարդկային ոյժը անհնար է յաղթահարել այդ ահարկու գետին և նրա վրա կամուրջ շինել: Բայց երբ յիշեալ ծերունուն երկաթուղով բերում են մինչև կամուրջ՝ ծերունին տեսնելով լսածի ճշմարտութիւնը՝ բացականչում է. «կորաւ Դարիան»: Բնիկները գետի վրա երթևեկում են մակոյկներով և երբ մակոյկները խրվում են աւազի մէջ, այն ժամանակ նրանք տասնեակներով մինչև վիզը մտնում են ջրի մէջ և լծվելով մակոյկին քաշ են տալիս ծանծաղ տեղից. այդ պատճառով ճանապարհին յաճախ պատահում է տեսնել ջրի մակերևոյթի վրա տասնեակ մարդկային գլուխներ, որոնք իրանց յետևից քաշում են մակոյկներ կամ նաւակներ:

Պետրո-Ալէքսանդրովսկը ռուսական նոր քաղաք է, աւելի ճիշտ բերդաքաղաք հիմնած Խիվայի դէմ: Սրա հիմնվելը ընդամենը 36 տարի է, երբ ռուսները վերջնականապէս նուաճեցին Խիվայի խանութիւնը: Ռուսների առաջին արշաւանքը Խիվայի վրա տեղի է ունենում դեռ Պետրոս Մեծի օրով Ուրալի կողմից, սակայն անյաջող, իսկ վերջնականապէս նա նուաճվում է 1869 թւին գեներալ Կաուֆմանի ձեռքով Ալէքսանդր II-ի օրով, երբ ի յիշատակ այդ երկու միապետների շինում են այս քաղաքը և անուանում Պետրո-Ալէքսանդրովսկ:

Պատմում են, որ անցեալ դարի սկզբներին Ուրալի կօզակների կողմից էլ եղել է մի մեծ արշաւանք Խիվան գրաւելու, որոնք թւով մօտ 400 հազար հոգի պահանջում են խիվացիներից հպատակութիւն: Բնիկները խորամանկութեամբ համաձայնում են, սակայն յիշեալ 40 հազար հոգուն ցրելով իրանց գիւղերում, մի գիշերվայ մէջ բոլորին էլ կոտորում են:

Պետրո-Ալէքսանդրովսկը փոքրիկ, հասարակ գաւառական քաղաք է Ամու-Դարիայի ափին: Վարչական կողմից սա գտնվում է Սիր-Դարիայի շրջանում և Ամու-Դարիայի բաժնի (ОТДѢЛЪ) վարչական կենտրոնն է: Ռուս բնակիչների մեծ մասը զինուորականներ են և պետական պաշտօնեաներ: Այստեղ կայ մշտաբնակ մի բատալիօն զօրք իր արտիլերիայով: Խիվայի խանը թէև մինչև այժմ էլ անկախ է իր հպատակներին կառավարելու գործում, սակայն ռուս կառավարութեան համար նա մի նահանգապետի իրաւունք էլ չունի:

Պետրո-Ալէքսանդրովսկում հայեր չկան. մշտաբնակ միայն մի հոգի հայ կայ, ամուրի, որ մի խղճուկ խանութ ունի և մի քանի սեփական շինութիւններ: Աւելի քան 20 տարի է սրա այստեղ ապրելը, բայց ոչ մի անգամ դեռ չի հաղորդվել, որովհետև երբեք այս կողմերը հայ քահանայ չի եղել: Սակայն այստեղի բատալիօնի մէջ կան մօտ 100 հոգի հայ զինուորներ, մեծ մասամբ երևանեան նահանգից: Նկատելի է, թէ ինչ ուրախութիւն է պատճառում հայ քահանայի գալը տեղիս հայ զինուորներին, որոնք այստեղ գալուց յետոյ միանգամայն զուրկ են եղել այն բոլորից, ինչ որ հարազատ և սուրբ է եղել նրանց համար: Նոյն իսկ նրանց հաղորդվելը, որ օրէնքի համեմատ չորս տարին մի անգամ պէտք է կատարվելիս լինէր, մինչև այժմ երբեք իրագործվելիս չէ եղել հայ զինուորների վերաբերմամբ:

Պետրո-Ալէքսանդրովսկից մինչև Խիվա քաղաքը, որ խանութեան մայրաքաղաքն է, ընդամենը 60 վերստ է:

Ներսէս քահ. Աբրահամեանց

ՊԱՏԱՍԽԱՆ Պ. Կ. ԱՒԱԳԵԱՆՑԻՆ

Դեկտեմբերի 3-ին

«Մշակի» 241 №-ում հաղորդած հայ վիրաւոր զինուորների պահպանութեան մասին պ. Աւագեանը հակիս ոչինչ չառարկելով՝ յայտնում է միայն, թէ բացի իրանից, որ բնակարանի հոգսն է քաշել՝ ուրիշ ծախսը «Կարմիր խաչի» ընկերութիւնն է կատարում է որ՝ ամեն հայի պարտականութիւնն է իր ոյժերի չափ օգնել: Մենք պ. Աւագեանին ամենևին չենք ճանաչում և չը գիտէինք, որ մեր յայտարարութիւնը նրա համեստութիւնը պիտի շօշափէ: Մենք թէ պ. Աւագեանի և թէ դրա հետ մի խեղճ արհեստաւորի իւրովանն օգնութիւնն գալու երևոյթը հարկաւոր համարեցինք արձանագրել, որպէս ուրախալի է և ժողովրդական գիտակից յարաբերութեան մի նշան դէպի կուսակցութիւնը հետևեալ դիտումով,

1) «Դաշնակցական» կուսակցութիւնը իր գովելի միջամտութեամբ առաջն առաւ քաղաքումս մի մեծ կոտորածի և շահատակութեան, 2) Մեծ հնարաւորութեամբ և եռանդով պարսկահպատակների կեանքի ապահովութիւնը իրագործեց թշուառութիւնից և աղէտից, որը մեր ազգի համար խիստ կարևոր է, 3) «Դաշնակցական» կուսակցութիւնը Երևանից և Բաքուից եկած խաների կեանքի յատուկ ապահովութեան հոգս քաշեց և նրանց, ի պատիւ հայերի դժուար դրութիւնից հանեց. 4) մինչև անգամ Հավլաբար սարի մօտ գտնվող քաղաքային հիւանդանոցի պահպանութեան համար, ինչպէս նոյն 241 №-ում հաղորդել ենք, հէնց իրան՝ հիւանդանոցի տեսչի բերանից լսելով—իր պահապանները կանգնացրեց և նրա ֆունկցիան վերանորոգեց, այն ինչ տեղիս իշխանութիւնը անկարելի համարեց մի քանի պահակազինուոր ուղարկելու և այլն և այլն: Պարզ է, որ ընկերութեան այս ընթացքը պէտք է հասարակական ամեն խաւերից փոխադարձ համակրութիւն և քաջալերութիւն վաստակէր և մենք էլ փնտռում էինք այդպիսի դէպքեր արձանագրելու, որպէս հասարակական բարոյական պարտաճանաչութեան արտայայտութիւններ: Բարոյական պարտաւորութիւն իմանալը այլ բան է, պ. Աւագեան, իսկ հարկաւոր տեղը նրան գործադրելը—բոլորովին ուրիշ բան է, այնպէս, ինչպէս լրագրի հաղորդած տեղեկութիւններ կարդալը ամեն գրագէտ մարդու գործ է, իսկ կարդացածի իմաստը ըստ ամենայնի հասկանալը, այդ արդէն, ներեցէք, ամեն մարդու գործը չէ…

Լրատուն

Թիֆլիս

ՄԻ ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԿՈՒՄԲԻ ՄԱՍԻՆ

Մենք «միտինգների» մօմենտում ենք ապրում:

Համախմբումներ առանց դասակարգի, հասակի ու սեռի խտրութեան,—ահա մօմենտի հոգեբանութիւնը:

Եւ այդ ազատութիւնը մի ահագին կրթական նշանակութիւն ունի հասարակութեան համար:

Ամեն օր, ամեն ժամ հասարակական-քաղաքական խնդիրներ են ծագում, որոնք պիտի մշակուեն միտինգների մէջ, որտեղ լայնօրէն մտքեր են փոխանակվում և որոշումներ կայացվում:

Այսպիսի համախմբումները մեծ դպրոց են, որտեղ պարզվում են մարդկանց մտքերը, որտեղ կռվում—կոփվում են ազատական գաղափարները: Այնտեղ շփվում են միմեանց հետ հասարակութեան բոլոր խաւերը և այդպիսով քիչ թէ շատ մօտենում են միմեանց ու հաւասարվում են գաղափարներով, իդէալներով, ձգտումներով:

Եւրոպայում մեծ յեղափոխութիւնները կատարել են «կլուբները»: Այնտեղ են մշակվել սահմանադրական պահանջները ու տարվել պարլամենտ: Յատկապէս մեզ՝ հայերիս համար միանգամայն անհրաժեշտ է, որքան կարելի է յաճախ գումարվել և խօսել ընթացիկ խնդիրների մասին, պարզել հայ հասարակութեան առաջ կենդանի խօսքով Ռուսաստանի յեղափոխութիւնը և միևնոյն ժամանակ խօսել նաև մեր ազգային ցաւերի մասին:

Մինչև այժմ անիծեալ ռեժիմի շնորհիւ մեզանում կաստայական միջնապատերը անջատել են ինտելլիգենցիան—պրիկաշչիկներից ու բանուորից: Այսօր այդ պատնէշները պիտի ընկնեն և բոլոր դասակարգերը խառնվեն իրար և մի ուժեղ քաղաքական ու հասարակական զանգված կազմեն:

Իսկ այդ հնարաւոր է միայն ամենօրեայ շփումով, մտքերի փոխանակութեամբ:

Այսպիսով միայն հնարաւոր կը լինի որոշել թէ ինչ դիրք պիտի բռնէ հայ մասսան համառուսական շարժման մէջ և ինչ պիտի լինի նրա տակտիկան:

Ինտելլիգենցիայինն է, ի հարկէ, վերապահված այս գործի ձեռներէցութիւնը և նրան եմ դիմում:

Անհրաժեշտ է հայկական մի կենտրոն ստեղծել, մի ակումբ, ուր մուտք ունենային ամեն դասակարգի մարդիկ, որտեղ կարդային դասախօսութիւններ քաղաքական և հասարակական հարցերի մասին:

Մենք տեսնում ենք, որ վրացիք կլուբ են հիմնում, որ քաղաքային վարչութիւնը տեղեր է որոնում միտինգների համար և մինչև անգամ մահմեդականները պատրաստվում են իրանց ժողովարանն ունենալ:

Մենք չենք կարող յետ մնալ ուրիշներից, մանաւանդ որ մենք արդէն վաղուց ունենք այդպիսի մի ակումբ.—դա Թիֆլիսի ժողովարանն է:

Ցաւակցաբար մեր ինտելլիգենցիան հեռացել է ժողովարանից, որի անդամները վաճառականական դասն են կազմում:

Մենք առաջարկում ենք մեր բոլոր ինտելլիգենտ ազգայիններին նորից մտնել ժողովարան իբրև անդամներ և լոյս, կենդանութիւն մտցնել այդ խաւար մթնոլորտում: Լսում ենք, որ շատերը զգացել են մի հայկական ակումբի անհրաժեշտութիւնը և արդէն որոշել են այս տարի կանդիդատ գրվել Թիֆլիզի ժողովարանին: Ցանկալի է միայն, որ ժողովարանի վարչութիւնը (աւագների խորհուրդ) ի նկատի ունենալով հիմնարկութեան բարգաւաճութիւնը և մեր նպատակի օգտաւէտութիւնը, նոր մտնողներից միայն տարեկան անդամավճարը վերցնի (կարծեմ 15 ռ.), առանց պահանջելու այն աւելորդ վճարը, որը սահմանված է նոր կանդիդատների համար: Այդպիսով կանհետանայ մի խոչընդոտ, որի վրա շատերը մատնանիշ են անում:

Վ. Արծրունի

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՅԻՑ

Նոյեմբերի 11-ին

Կովկասեան Հայոց Նախկին Բարեգործական Ընկերութիւնը, ինչպէս ուրիշ մի քանի քաղաքներում, Ախալցխայում էլ ունէր մի բաժանմունք, որը իր ժամանակին բաւական արդիւնաւոր գործունէութիւն էր ցոյց տալիս մեզանում, տալով տեղական կարօտեալ ժողովրդին թէ նիւթական և թէ բարոյական օժանդակութիւն: Ընկերութիւնն ունէր գեղեցիկ և ճոխ գրադարան-ընթերցարան, որը փակվելուց յետոյ յանձնվեց քաղաքային վարչութեան և այժմ, դժբաղդաբար աննախանձելի վիճակի մէջ է գտնվում: Իր գործունէութեամբ Ախալցխայի ճիւղը Կովկասի Հայոց Բարեգոր. Ընկերութեան առաջնակարգ ճիւղերից մէկը պէտք էր համարել: Սակայն 1899 թ. տխրահռչակ Գոլիցինի հայատեաց ազդեցութեան շնորհիւ փակվելով Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը, փակվեց և մեր Ախալցխայի ճիւղը, իսկ տրված սահմանափակ նոր կանոնադրութեամբ՝ Բարեգործական Ընկերութիւն բանալը Ախալցխայում՝ աննպատակ և անօգուտ համարվեց:

Այժմ, երբ ռուս քաղաքականութիւնը փոխվեց, երբ յետ տրվեցին հայոց եկեղեցական կալուածները և ուսումնարանները, երբ մանաւանդ վերջին կայսերական մանիֆեստով սահմանադրութիւն տրվեց, որով ազատութիւն է տրվում բանալ զանազան ընկերութիւններ, բնականաբար պէտք է հոգ տանել վերաբանալու մեր Նախկին Բարեգ. Ընկերութիւնը իր ճիւղերով, որի կարիքը մեծ է: Մանաւանդ ներկայ աղէտալի և տագնապալից րօպէներին, երբ հազարաւոր անմեղ մարդիկ զանազան կոտորածների և հրդեհների շնորհիւ, մնացել են վերին աստիճանի կարօտ դրութեան մէջ:

Ինչպէս յայտնի է, այդ մասին արդէն Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերութեան ընկ. անդամների մէջ միտք է յղացել և սկսել են նախապատրաստութիւններ տեսնել վերաբանալու Նախկին ընկերութիւնը: Դրա համար նրանք դիմել են գաւառական Նախկին Բ. ընկ. ճիւղերի վարչութեան անդամներին, որ Նախկին անդամների միջոցով առանձին ժողովներ անելով իւրաքանչիւրը յայտնէ իր որոշումը Բար. ընկ. վերաբացման մասին, որպէս զի յետոյ խնդրամատոյց լինեն իշխանութեանը այդ մասին: Ի թիւս ուրիշների դիմել էին և Ախալցխա: Ուստի, ամսիս 19-ին, երեկոյեան ժամը 7-ին, քաղաքային գրադարան ընթերցարանի դահլիճում տեղի ունեցաւ նոյն ընկերութեան Ախալցխայի բաժնի նախկին անդամների ժողովը: Ժողովում ներկայ էին մօտ 20 անդամներ և մի քանի հոգի էլ ոչ անդամներից: Ժողովի նախագահ ընտրվեց նախկին վարչութեան նախագահ Աբ. քահ. Ղալէջեանը: Հայր նախագահը կարդաց Թիֆլիսի հայոց Բար. ընկ. վարչութեան գրութիւնը և ժողովը առանց այլևայլութեան միաձայն ցանկութիւն յայտնեց վերաբանալ նախկին Կով. Հայոց Բար. ընկերութիւնը իր ճիւղերով, ինչպէս և Ախալցխայի ճիւղը: Այդ մասին եղաւ արձանագրութիւն Թիֆլիսի Բար. ընկ. վարչութեանը ուղարկելու համար:

Խ. Դ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսում հայ-թուրքական յարաբերութիւնների ամբողջ ընթացքում Միքայէլեան հիւանդանոցը տարվել են 39 վիրաւոր թուրքեր, որոնցից մեռել են 8 հոգի. վիրաւոր հայեր տարվել են 27, որոնցից մեռել 1-ը, վրացի, 14, մեռել է 3, ռուս 4, գերմանացի 1, հրեայ 1, օսետին 1 հոգի: Բացի դրանից VI քաղաքամասի բուժարանում (Խարբուխի բաժին) կին-բժիշկ Շչերբինան վիրակապական օժանդակութիւն է հասցրել մօտ 300 վիրաւոր թուրքերի, որոնցից 95 ⁰/₀-ը եղել են Բօրչալուեցի թուրքեր: Դրանցից 25-ը մահացու վիրաւորներ են եղել: Բացի Միքայէլեան հիւանդանոցում եղել են մօտ 30 թուրք դիակներ: Թէ որքան են VI քաղաքամասում սպանված թուրքերի թիւը—բոլորովին անյայտ է, որովհետև թուրք կրօնաւորները թաղցրել են դիակները: Սանիտարական խմբերի անդամները և գթութեան քոյրերից շատերը պատմում են, որ երբ ուզում էին մտնել այս ու այն ընդարձակ ներքնայարկերը կամ այս ու այն դատարկ սենեակները, մի մօլլա կամ մի սէյիդ խաչաձև պարզելով թևերը, արգելել են «օտարներին» ներս մտնել մահմեդական դիակների ժամանակաւոր կայարանը: Պատմում են նոյնպէս, որ գիշերներով տանելիս են եղել դիակներ թուրքական գերեզմանատունը և թաղելիս: Իսկ ոմանք էլ ասում են, որ Բօրչալուի թուրքերը Թիֆլիսից դուրս փախչելիս, կողոպտված իրերի հետ տարել են և իրանց սպանվածներից շատերի դիակները:

—

Թիֆլիսից Բաթում մեկնեց գեն.-լէյտենանտ Բեչեմինը, ունենալով յատուկ լիազօրութիւններ կովկասեան զօրքերի գլխաւոր հրամանատարից:—Թիֆլիսից մեկնեց նաև Քութայիսի համակրելի նահանգապետ Ստարօսելսկին: Այդ երկու պաշտօնատար անձերի մեկնումը երևի սերտ կապ ունի Բաթումում և Քութայիսում տեղի ունեցող արտակարգ դէպքերի հետ:

—

Անդրկովկասեան երկաթուղիների այն կայարանները, որոնց սպառնում են թուրքերը, պաշտպանվում են 5 վաշտ հետևակ զօրքով, մի հարիւրեակ կազակով և 200 հոգի երկաթուղային բատալիօնի զինուորներով:—Բայց չը նայելով այդ ամենին, կասենք մենք, զինուորների և նոյն իսկ օֆիցերների աչքի առջև դուրս են քաշել վագոններից 2-3 հայերի և սպանել. իսկ զինուորականի զգեստ հագած, զինուորականի պատւի անունով խօսող այդ պարոնները լռել են, քարացել... Վա՜յ է դա, թէ «պօլիտիկա»: Թէ մի և թէ միւս դէպքում այդ բանը վայել չէ պատւի նշոյլ ունեցող մի զինուորականի:

—

Հավլաբարի բնակիչների, մանաւանդ պաշտօնեաների դրութիւնը՝ կառքերից օգտվելու դէպքերում դժուարացած է շատ հրապարակի վրա, կամ յաճախ կառքեր չը կան, կամ եղածները միանգամայն անպէտք են: Ի նկատի ունենալով այդ հանգամանքը հարկաւոր է կառապանների աւագից պահանջել, որ նա այդ դժուարութիւնը վերացնէ, մանաւանդ որ այս տարուց այնտեղ մի քանի նոր հիմնարկութիւնների բացվելու պատճառով (առևտրական դպրոց, երկրորդ պրոգիմնազիա և այլն) թէ ծառայողների և թէ աշակերտների և ծնողների համար, մանաւանդ ձմեռվայ անտանելի եղանակներին, անհրաժեշտ են համարվում կառքերը: Դարձնում ենք քաղաքային վարչութեան ուշադրութիւնը այս կարևոր պահանջի վրա:

—

Հետևեալ տողերն է տպված „Начало" լրագրում. «Պետերբուրգում շատ տարօրինակ լուրեր են պտտում պալատական կուսակցութեան վճռապէս գործելու ցանկութիւնների մասին: Այդ կուսակցութեան գլուխ համարվում է կոմս Ա. Ի. Իգնատիեվը: Ինչպէս ասում են, այդ կուսակցութիւնը ամեն միջոց գործ է դնում հեռացնելու կոմս Վիտտէին և Իգնատիեվին նշանակել տալ դիկտատոր: Վերջին օրերս կայացաւ կուսակցութեան խորհուրդը, որին ներկայ էին ընդամենը մի քանի հոգի: Խօսեցին քաղաքական նորութիւնների, մինիստր-նախագահին հեռացնելու և երկրը խաղաղացնելու մասին: Լուրերին նայելով, հէնց այդ նիստումն էլ որոշել են գործել վճռաբար»:

Խարփուխի թաղի (6-դ քաղաքամաս) բնակիչները, ինչպէս հաղորդում են մեզ այնտեղի կեանքին մօտիկ անձինք, ինքնապաշտպանութեան կողմից, միւս թաղերի հետ համեմատելով շատ աննախանձելի վիճակի մէջ են և հրկիզութեան դէպքեր այնտեղ շարունակվում են տեղի ունենալ: Ցանկալի է, որ քաղաքային վարչութեան կից կազմվել էիք «կենտրոնական գործադիր բիւրօն» օր առաջ սկսելով իր գործունէութիւնը՝ ամենից առաջ ուշադրութիւն դարձնէ այդ թաղի վրա, որի կոյ բնակիչները թուրքերի գլխաւոր բնահոսութ՝ան կենտրոնում ապրելով՝ ապահով չեն դեռ եւ, մի կողմից՝ որ կրքերը դեռ ես ամենի մէջ չի կարելի համարել մարած, իսկ միւս կողմից՝ տեղական ոստիկանութիւնը ես այնքան յուսալի նշաններ չէ ցոյց տալ իր գործունէութեամբ այդպիսի դէպքերում:

Տեղական լրագիրներին հաղորդում են, որ Եւլախ կայարանում հաւաքվել է 200 վագոնից աւելի ապրանք: Շրջակայ թուրք գիւղացիները և նոյն իսկ հեռուից կողոպուտի եկածները, ամեն գիշեր քիչ-քիչ գողանում, թալանում տանում են:—Մարդ ակամայ մտածում է, թէ այս ինչ անտէրութիւն է թագաւորում. կառավարութիւն չը կայ, գոյութիւն չունի...

Թիֆլիսի դումայի ձայնաւոր պ. Ն. Տիգրանեանը դումային առաջարկ է արել 1,000 րուբլի քաղաքային միջոցներից օժանդակութիւն տալ գործադուլ արած պօստ-հեռագրական ծառայողներին.

Կազանի լրագիրները առաջ են բերում այնտեղի զինուորների հետևեալ կոչը. «Մենք, տեղական բատալիօնների զինուորներս նախազգուշացնում ենք սև-հարիւրեակի անդամներին, որ ամեն մի փորձ բռնութեան սովորողների և խաղաղ քաղաքայինների դէմ Կազան քաղաքում կը զսպենք զէնքի ուժով, իսկ Տրեպովի երբեմն հրատարակած հրամանը —«չը խնայել փամփուշտ», մենք ճշմարտութեամբ կը գործադրենք սև-հարիւրեակի անդամների վերաբերութեամբ: Եւ ոչ մի իշխանութիւն չի կարողանայ ազատել ձեզ մեր ձեռքից, որովհետև հրացանները և սուինները մեր ձեռքին են և մենք գիտենք նրանցով գործել», Ստորագրված է. «մի խումբ զինուորներ ավիեաժեան, վելատուժեան, սպասկի և լաւիշեան բատալիօններից»:

Մայրաքաղաքի թերթերում կարդում ենք. «Մինիստրները շարունակում են իրանց նիստերը, նոր ու նոր վէրքեր հասցնելով հոկտ. 17-ի դժբաղդ մանիֆէստին, որից առանց այն էլ հազիւ մի քանի պատառոտված կտորներ են մնացել: Վերջին նիստը նուիրված է գործադուլների ազատութեան հարցին և ժողովների ազատութեան օրէնքի մէջ մտցնելիք սրբագրութիւնների խնդրին: Խորհուրդը վճռեց թոյլատրել ամեն տեսակ ժողովներ, միայն ոստիկանութիւնը կարող է թոյլատրել ժողովը կամ չը թոյլատրել, սակայն վերջին դէպքում նա փակման պատճառները պէտք է յայտնէ տեղական պրօկուրօրին, որը իր կարգին գործը յանձնելու է հաշտարար դատաւորին: Դատաւորը կարող է հաստատել կամ ոչ ոստիկանութեան որոշումը, և գործը կարող է անցնել կառավարիչ սենատին, որը կը քննէ այդ գործը սովորական հերթից դուրս: Բացի դրանից, ներքին գործերի մինիստրին իրաւունք է տրվում մի ամսով դադարեցնել ամեն տեսակ ժողով, որ և է տեղում, ուր հասարակական ապահովութեանն սպառնացող վտանգ տեսնի: Սակայն այդ դէպքում էլ մինիստրը պէտք է այդ մասին զեկուցանէ կառավարիչ սենատին»:

Պօստ-հեռագրական բոլոր պաշտօնեաների ընդհանուր թիւն է 46,934 հոգի, որոնց ռոճիկների ընդհանուր չափը 1906 թւին լինելու է 17, 322,604 րուբլի:

Վերջին ժամանակները քաղաքիս մասգործները ոչ միայն ոչխար, այլ նոյն իսկ տաւարը մորթում են ի ցոյց ժողովրդի իրանց խանութներում և խանութների առաջ: Նրանք յաճախ ծախու են հանում այնպիսի տաւարի միս, որ նոյն իսկ արտաքին տեսքից երևում են մսի վատ յատկութեան նշանները. գներն էլ նշանակում են իրանց կամքով՝ առ հասարակ սանիտարական հսկողութիւնը ամեն բանի վրա միանգամայն բացակայում է:

Քաղաքային վարչութիւնը դեկտեմբերի 5-ի իր նիստում լսեց սանիտարական-բժշկական տեսուչ Կ. Ն. Ստեփանեանի զեկուցումը ժամանակաւոր վիրաբուժական հիւանդանոց բանալու մասին: Ահա գործի էութիւնը: Այն անձանց նոր կազմված դաշնակցութիւնը, որոնք պատրաստակամութիւն են յայտնել ակտիվ կերպով մասնակցել դժբաղդ դէպքերի ժամանակ առաջին օգնութիւն հասցնելու գործում, դեկտեմբերի 2-ին կազմելով ժողով, որոշեցին՝ վերոյիշեալ օգնութեան ընդհանուր կազմակերպութիւնը յանձնել Թիֆլիսի վիրաբոյժ բժիշկների քննութեանը: Դեկտեմբերի 3-ին կայացաւ վերոյիշեալ բժիշկների ժողովը, որին ներկայ էին բժիշկներ՝ Բոզենբատում, Մայսուրեանց, Կիմօնտ, Նաւասարդեանց, Ֆիշեր, Իստամանով, Վարսալաձէ, Տէր-Միքայէլեանց, Փիրադով, Գուրկօ, Իվանով, Ջէրէպանով, Շէրման, Խալաթով և Ստեփանեան: Հարցի բազմակողմանի քննութիւնից յետոյ, բժիշկների ժողովը մշակեց կազմակերպութեան յատակագիծը և մի և նոյն ժամանակ անհրաժեշտ համարեց անյապաղ բանալ վիրաբուժական հիւանդանոց 50 մահճակալներով: Այդ որոշումը ծախսերի մանրամասն նախահաշւի հետ միասին ներկայացվեցին քաղաքային վարչութեան, որը հաւանութիւն տալով վերոյիշեալ առաջարկութեան, վճռեց յատկացնել 5000 ր. ժամանակաւոր վիրաբուժական հիւանդանոց սարքելու համար, 3000 ր. հիւանդանոցը պահելու համար երկու ամսով և 1000 ր. վիրակապային նիւթեր գնելու համար: Այդ որոշումը կառաջարկվի քաղաքային դումայի քննութեանը:

Ինչպէս ասում է «Р. Газ.» լրագիրը, Ս. Իւ. Վիտտէն փորձ արեց դրակօնեան ժամանակաւոր միջոցներ սահմանել մամուլի մասին, առանց պետական խորհրդի քննութեան, ուղղակի կայսերական հրամանով: Բայց լոյս չորեքշաբթի գիշերը Ցարսկոէ—Սէլօից սուրհանդակի միջոցով չետ ստացաւ իր նախագիծը, առանց կայսերական ստորագրութեան, և Թագաւոր-Կայսրի Սեփական ձեռքով դրված ծանօթութիւնով. «Անյապաղ յանձնել պետական խորհրդի քննութեանը»: Դա շատ բնորոշ փաստ է, որը պարզ ցոյց է տալիս, որ Վիտտէն ռէակցիայի թշնամին չէ, այլ նրա ամենամօտ բարեկամն է»:

Թիֆլիսի Պօստ-հեռագրական գլխաւոր մեխանիկը յայտնում է քաղաքային վարչութեանը, որ վերջին ձիւնի պատճառով ծռված, վայր ընկած հեռագրական սիւները և կտրատված թելերը վերանորոգելը պահանջում է փորձված բանուորներ: Բայց բանուորները, վախենալով գործակատարներից, չեն համաձայնվում աշխատել նոյն իսկ բաւական բարձր օրավարձով:

Հայ-թուրքական հաշտարար կոմիսիան ընտրել է մի ենթակօմիսիա, որն իր վերջին նիստում մշակել է համակովկասեան հայ-թուրքական ընդհանուր ժողով կազմելու, որը պէտք է հնարներ մտածէ հայ-թուրքական ընդհարումների առաջն առնել: Որոշում է կայացվել ներկայացուցիչներ հրաւիրել բոլոր նահանգներից, բացի Քութայիսի նահանգից, ուր թուրք ամենևին չը կայ, իսկ հայ—շատ քիչ: Համաժողովը որոշելու է նաև փոխադարձ գարանդիայի ձևերը:

Նոյեմբերի 27-ին լոյս տեսաւ «Русское Знамя» լրագրի առաջին համարը: Դա սև—հարիւրակի օրգանն է, որ հրատարակում է «ռուս ժողովրդի դաշնակցութիւնը»: Այդ լրագիրը կոչ է անում կոտորած և կողոպուտ անելու: Խմբագրի փոխարէն ստորագրում է հրատարակիչ Ա. Ն. Դուբրովինը: Այդ զմայլելի լրագիրը ձրի բաժանում են ոստիկանատներում:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ նոյեմբ. 26-ին Խրուստալիօվին տարան Պետրօպաւլովսկի բերդը մեծ թիւ զինուորներով շրջապատված: Վախենալով, որ բանուորները կարող են գնալ և փորձել ազատել նրան, բերդն անմիջապէս դրին պատերազմական վիճակի մէջ. դռները փակեցին, պահապանների թիւը բազմացրին, թնդանօթները դուրս բերին և այլն:

Սարատովի առանձին լիազօրութիւններով օժտված գեն.-նահ. գեն.-ադիւտանտ Սախարովին սպանողը մի կին է, անունը Անաստասիա Պոպովա: Նա անդամ է սօցիալիստ-յեղափոխական ընկերութեան մարտական կազմակերպութեան: «Сар. Дн.» լրագրի ասելով, այդ օրիորդը խնդրել է ունկնդրութիւն: Տեսնելով շատ շնորհքով հագնված մէկին, նրան ներս են թողել: Այդ ժամանակ Սախարովը նստած գրելիս է եղել: Պոպովան ատրճանակի 2-3 հարուածով տեղնուտեղը մահացրել է գեներալ-ադիւտանտին: Սպանողին ձերբակալել են:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԴԷՈՒՍ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Նուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
ՉԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի. ներքին և ներվային
Զ. Ի. ԱԻԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳՋԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. ՀԱՐԱԳԵՏԵԱՆՑ—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հ.
ԳՐԻ-ԲԺԻՇԿ ՇՁՆՐԲԻՆԻՆԱ—$1^1/_2$—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ց. ԳՈՒՐԴԵՆՈՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:

ԻՐԻԿՈՒՆԵՐԸ

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՈՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց 5 և ծաղկահատ.
Խ. Դ. ԱԲԵԼԵԱՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—$7^1/_2$ ժ.
Գ. Ա. ԱՐԴԱՋԵԱՆԻ. կատարում է միկրօ-քիմիական և բակտերիօլոգիական հետազօտութիւններ:
Վճարը 50 կ. չքաւորները ձրի: Համաճարակի (չոփ-ելիսում) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԷԼԷԿՏՐՕ-ԲՈՒԺԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ
Բժիշկ Միխայէլ Գեղեվանօվի

Ջղային հիւանդների ընդունելութիւնը
Առաւօտեան ժամի 12-ից մինչև 1-ը,
Երեկոյեան ժամի 6-ից—7-ը,
Կորգանովսկայա փող. № 20 Վերայում: Սեփական տ., տէլէֆօն № 791: (ա. օ.) 40—150

ՏՊԱԳՐՈՒՄ ԵՆՔ
ԱՅՑԵՏՈՄՍԵՐ և ՏՊԱՐԱՆԱԿԱՆ ՄԱՆՐ ԳՈՐԾԵՐ

Վաճառվում են մեծադիր և բաց-նամակ պատկերներ:
Դիմել՝ фото-цинкогр. С. Согомоняна, Базарная, 22. Тифлисъ. (Հ. կ. ե.) 3—3

ОТКРЫТА ПОДПИСКА
на еженедѣльную газету учащихся
„Э Х О"

Нашъ лозунгъ: „Свободная автономная школа, въ свободной Россiи!"

Редакція приглашаетъ учащихся всѣхъ среднихъ учебныхъ заведеній какъ мужскихъ, такъ и женскихъ принимать участіе.

Ближайшая цѣль редакціи, это сдѣлаться дѣйствительнымъ органомъ всѣхъ учащихся.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

	Съ достав.	Безъ дост.	Съ перес.
На 1 мѣсяцъ	25 к.	20 к.	30 к.
„ 2 „	50 к.	40 к.	60 к.
„ 3 „	70 к.	60 к.	90 к.
„ 4 „	90 к.	80 к.	1 р. 20 к.
„ 5 „	1 р. 10 к.	1 р. — к.	1 р. 50 к.

Подписка принимается въ конторѣ газеты, а также въ отдѣленіяхъ ред. конт. Въ I-й женской гимназіи ученицы VIII кл. Амираговой, во II-й женской гимназіи ученицы VII кл. Соболь, въ III-й женской гимназіи ученицы VII кл. Косабовой, въ III-й мужской гимназіи въ ред. газ. «Отголоски», въ IV женской гимназіи ученицы VII кл. Трофимовой, въ музыкальномъ училищѣ ученика средн. курса А. Туманова.

Редакція и контора помѣщается въ I-й мужской гимназіи, входъ съ Гимназической улицы, въ помѣщеніи читальни, открыта отъ 10 до 12 ч.

Լոյս տեսան և վաճառվում են ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ
ԾՈՑԻ և ՊԱՏԻ 1906 Թ.
„ՇԻՐԱԿ"
Պատկերազարդ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ
(Ութերորդ տարի)
համառօտ բովանդակութիւնը

ԾՈՑԻ ՕՐԱՑՈՅՑԸ պարունակում է վաճառականական, բժշկական, առողջապահական, բնագիտական, գիտական, կաթնատնտեսական, մեղուաբուծական, տնտեսական, ճանապարհորդական, բանասիրական, կենսագրական, գիւղատնտեսական, բանաստեղծական—ազգային քնար, պատմական—Այծեմնիկ՝ հայ հերոսուհու յաղթանակը Անիում, Լեզու կարող՝ ճշգրիտ անցք, Ո՞վ էր Վարդան Մամիկոնեանը և այլ տեղեկութիւններ: Վիճակագրութիւն հայերի—Թիւրքիայում, Պարսկաստանում և Ռուսաստանում, գլխաւոր բնակավայրերը (հայ-թրքական կոտորածների առիթով): Զուարճալիք, բերուններ, խնդիրներ, հանելուկներ, վիճակներ:

ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԸ պարունակում է ընտիր մտքեր և աֆօրիզմներ, եկեղեցական և ազգային տօների բացատրութիւններ, հայոց հեթանոսական սովորութիւններ, թռչնապահական, մեղուաբուծական, անասնապահական, բժշկական, առողջապահական տեղեկութիւններ. խորհրդածութիւններ հեղինակաւոր անձանց: Ազգային քնար—բանաստեղծութիւններ. հայկական կեանքից և հայոց պատմութիւնից նշանաւոր դէպքեր—Թաթարների արշաւանքը. տնտեսական, արհեստագիտական խորհուրդներ, հետաքրքիր նորութիւններ, պատմական ժամանակագրութիւն, կենսագրութիւններ, նոր անեկդօտներ, առածներ, հանելուկներ, ժողովրդական-ազգային երգեր, լէլէներ: արկածալի և հերոսական դէպքեր Զէյթունցիների և Սասունցիների կեանքից: Տեղեկութիւններ մահմեդական վարդապետութեան մասին:

Իւրաքանչիւր օր, առաջին երեսների վրա տպագրված է միմի բանաստեղծական կտոր, համարեա բոլոր հայ բանաստեղծներից, որոնք արտայայտում են նրանց հայեացքը դէպի ազգն ու հայրենիքը:

ՏԱԽՏԱԿԸ ներկայացնում է Արագածը, Շիրակի դաշտը հայ գաւթանաւորներով, Անիի աւերակների առաջ նստած հայ կինը հովուի սրնգի նուագի տակ փնտրում է իր հայրենիքի անցեալ փառքերը: Նկարը գունագունագոյն է և կարող է սենեակի զարդ ծառայել:

ՊՐԷՄԻԱՆ միացրած է ծոցի օրացոյցի յաւելուածին մօտ 60 երես—«Վերածնութիւն Հայաստանի», հայերի մատուցած ծառայութիւնը ռուսներին Կովկասի տիրապետութեան ժամանակ, խոստումներ և յոյսեր Հայաստանի անկախութեան և այլն և այլն:

«Շիրակ» օրացոյցները զարդարված են մի շարք գունաւոր պատկերներով:

Գները՝ ծոցինը—20 կոպ., պատինը—50 կոպ.: Գումարով գնողներին լինում է մեծ չափով զեղչ:

Դիմել՝ Александрополь, типографія „Ширакъ" Карапету Апинянъ.—արտասահմանից—Alexandrople, Karapet Apinian (Caucase).

Աւելի մանրամասն բովանդակութիւնը առանձին թերթով տպագրված ցանկացողները կարող են ձրի ստանալ:

9—10 Կարապետ Ափինեան

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
Օպերային արտիստների ընկ.
Շաբաթ դեկտեմբերի 10-ին, արտիստ Մ. Բ. Սօկօլսկու բենեֆիսին
կը ներկայացվի
«ՍԵՎԻԼԵԱՆ ՍԱՓՐԻՉ»
օպերա 3 գործ. 4 պատկ. երաժ. Րօսսինիի:
Մասնակցում են տ.տ. Նիկիտօսկայիա, Կարպօվա, պ.պ. Սլավին, Սօկօլսկի, Դրակուլի, Դեմյանենկօ, Շէին:
Ներկայացման կարգը I Դէմօն II Սեվիլեան Սափրիչ:
Սկիզբը երեկոյեան 8 ժամին:
Տեղերի գները բենեֆիսային են (պակասեցրած)
Անօնս, կիրակի, դեկտեմբերի 11-ին, ցերեկը կը ներկայացվի
ԶՆԱՏԻԿՆԻԿ
Գիշերը «ՏՐԱՎԻԱՏԱ»
Երկուշաբթի, դեկտեմբերի 12-ին
կը ներկայացվի
ՉԵՐԵՎԻՉԿԻ
պատրաստում են ներկայացնելու
«Князь Игорь», «Рогнѣда», «Красное Солнышко».

ԲԺԻՇԿ
Բ. Ա. ՊԱՊՕՎԵԱՆ
Մասնագէտ—քթի, կոկորդի և ականջի: Ընդունում է հիւանդներին—առաւ. 10—$12^1/_2$ ժ. երեկ. 5—7 ժ.
Հասցէն. Միքայէլեան փողոց տ. Ֆօրբերի № 157. 10—10

ԲԺ. Ն. ԵԱՐԱՄԻՇԵԱՆ
Ներքին, մանուկների, կաշուի և վեներական հիւանդութիւնների համար:
Ընդունում է ամեն օր առաւօտեան 9—12 ժ. երեկոյեան 5— 7 ժ.
հասցէ—Արասարադեան հրապարակ № 9, մուտքը Շեկօֆեկեան փողոցից № 1: (եր.հ.կ.) 13—20

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վէլեամինօսկայա փողոց № 8: (կ.ռ.) 29—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Բ. Նաւասարդեան
Վերադարձաւ և առանձնելով իր «ԱՌԱՋԻՆ Մ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ», վերսկսեց բժշկական գործունէութիւնը: 33—100

ԲԺ. Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիսի, միզային, վեներական և մորթու. ամեն ունեցող հիւանդներին ամենայն օր առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեբուտովսկի և Պասկևիչեա փող. № 33/15 տ. Միրիմանեանի (Նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն): (ա.օ.) 28—100

ԲԺԻՇԿ
Լևոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.: Կանանց և երեխաների համար 11—12 ժ.: Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպէկտի և Կոդեոսկայեա փողոցի, տուն Թամամշեանի: Մուտքը Կոդեոսկի փողոցից № 2, (ա. օ.) 64—300

Ե Ր Կ Ա Թ Ո Ւ Ղ Ի

(Ժամերը հաշւած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով):

	Պօստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք.
Բագուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ, 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը	11 » 10 » »	5 ժ. 31 ր. առ.	1 ժ. 30 ր. ցեր.	9 ժ. 30 ր. գիշ.
Թիֆլիսից դուրս գնալը	11 » 55 » »	6 ժ. 07 ր. առ.	—	—
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 53 » »	7 ժ. 05 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 14 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 15 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 44 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 48 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր. գիշ.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 46 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր. գիշ.
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցեր,
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր գիշ.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 1է ր. գիշ.
Ալէքսանդրօպօլից դուրս գալը	7 » 38 ր. եր.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 10 » առ.	—	—	4 ժ. 48 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 22 » գիշ.	—	—	1 ժ. 13 ր. ցեր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 20 » »	—	—	2 ժ. 11 ր. ցեր.
Ալէքսանդրօպօլից դուրս գալը	10 » 15 » առ.	—	—	12 ժ. 50 ր. գիշ.
Կարս հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	4 ժ. 24 ր. գիշ.
Երևան հասնելը	4 » 21 » »	—	—	6 ժ. 48 ր. առ.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
„ՅԱՌԱՋ"
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԵՒ ԳՐԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹԻ,
ՈՐԸ ԼՈՅՍ Է ՏԵՍՆԵԼՈՒ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ:

Խմբագրութեան անդամներն են. Ահարոնեան Աւետիս, Դաւթեան Յոհան, Թոփչեան Եղիշէ, Խաժակ Գ., Նազարեան Լիպարիտ, բժ. Օհանջանեան Համ., Իւսուֆեան Յովհաննէս:

Մօտիկ աշխատակիցներն են. Բժ. Աթաբէգեան Լեւոն, Ա.—Դօ, Զարդարեան Ռուբէն, Զօրեան Ստեփան, Ջաւարեան Սիմէօն, Թումանեան Յովհաննէս, Իսահակեան Աւետիք, Լէօ, Լիսիցեան Ստեփան, Մալումեան Խաչատուր, Յովհաննիսեան Միքայէլ, Յովհաննիսեան Տիգրան, Շիւեան Սիմէօն, Պապովեան Ալէք., Սամուէլեան Խաչ., Տիգրանեան Սիրական, բժ. Օհանեան Քրիստ. և ուրիշները:

ԲԱԺՆԵԳԻՆՆ Է

Թիֆլիսում՝ տարեկան 6 ր., ամսական 50 կոպ.: Թիֆլիսից դուրս՝ տարեկան 7 ր., ամսական 60 կոպ.: Արտասահմանում՝ տարեկան 32 ֆր., ամսական 3 ֆր.:

Դիմել՝ Тифлисъ, редакція «Арачъ» կամ Tiflis (Russie) Rédaction «Haradj».

Խմբագրատունը գտնվում է Թիֆլիսում, Սերգիեվսկայեա փողոց № 9:

Խմբագիր—Ա. Սահակեան
Հրատարակիչ—Մ. Նալբանդեան
2—3

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
1906 Թ.
„ՄՈՒՐՃ"
ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
(Նոր շրջան VI տարի)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ

Ռուսաստան եւ Պարսկաստան—տարեկան 10 ր., կէս տարին 6 ր., 1 ամսվան 1 րուբլի:
Արտասահման—տարեկան 12 ր. (32 ֆ.), կէս տարին 7 ր., (18 ֆ.), 1 ամսվան 1 ր. 20 կ. ($3^1/_2$ ֆ.):

Ծանօթութիւն. Բաժանորդագինը կարելի է վճարել նաև մաս-մաս. սկզբում 5 ր., մայիսի 1-ին 3 ր. և յունիսի 1-ին 2 ր.—կամ սկզբում 5 ր. և յունիսի 1-ին 5 րուբլի: Հայոց դպր. վարժուհիների և ուսուցիչների, գիւղական քահանաների, միջն. ուս. աշակերտների և ուսանողների համար բաժանորդագինն է 8 րուբլի Ռուսաստանում: Թիֆլիսի բաժանորդները կարող են տարեկան բաժանորդագինը (10 ր.) վճարել մաս-մաս, բաժանելով այնպէս, ինչպէս իրանց յարմար է:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ Է

Թիֆլիսում—խմբագրատանը (Ճավճավաձեան փողոց տ. № 12):
Կայսրութեան այլ տեղերից պէտք է դիմել Тифлисъ, Въ редакцію журнала „Мурчъ". Արտասահմանից՝ Tiflis, Rédaction de la revue «Murtch».

«Մուրճի» գործակալներ.

Աստրախան—Գ. ք. Մկրտումեան:
Բագու—բժ. Գ. Սարգսեան, (Б. Морск. д. № 26) և Յ. Քոչարեան:
Բեբի-Էյբաթ—պ. Դ. Տէր-Դանիէլեան:
Երևան—«Արարատ» գրախանութ.
Կարս—պ. Համազասպ Տ.-Խաչատրեան:
Մոսկվա—պ. Ստ. Թումեան.
Սօչի—պ. Արամ Յակոբեան (Սեւծովեզերեայ շրջան):
Սամարկանդ—Ռ. ք. Բէկգիւլեան (Անդրկասպեան երկիր):
Թիֆլիս—«Գուտտեներգ» և «Կենտրօնական» գրավաճառ.
Վլադիկավկազ—Յ. ք. Սարիկեան (Հիւս. Կովկասի համար):
Թաւրիզ—Բժ. պ. Յ. Տէր-Ստեփանեան և Հ. Պանիրեան:
Եգիպտոս—դօկտոր Կ. Փաշայեան-Խան (Ալէքսանդրիա):
Էնզէլի—պ. Գ. Մելիք-Աբրահամեան:
Նոր-Ջուղա—պ. Տիգրան Աբգարեան:
Թէհրան—պ.պ. Ալէքսան Թումեանց և Լ. Բաբայեան:

1905 թւականի այն բաժանորդները, որոնք կը գրվեն մինչև այս տարվայ դեկտեմբերի 1-ը, վճարելով տարեկան ամբողջ բաժանորդագինը (10 ր.) միանուագ՝ կը ստանան, իբրև պրեմիա, պ. Առանձարի «ՎՇՏԻ ԾԻԾԱՂԸ»: Նոր գրվող բաժանորդները այդ պրեմիայի փոխարէն, կարող են ստանալ նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների «Մուրճ» ձրիաբար: 5—5

1866. Մոսկվա 1870. Ս.-Պետեր. 1882. Մոսկվա 1896. Նիժնի-Նովգ.
(GRAND-PRIX)
ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ
С.-ПЕТЕР-
БУРГЪ
ԹԻՖԼԻՍՈՒՄ
76—80